

ԱՐՄԱՆ ԲԱԲԱԶԱՆԵԱՆ ԿԸ
 ԴԻՄԷ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏՈԼԱՐԻ ԳԻՆԻ ՄԵԾ ԱՆԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ »ԴՐԱՄԻ ԱՐԺԵՒՈՐՈՒՄԸ ԿԸ ՀԵՏՊՆԴԷ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ«



Արման Բաբաջանեան

«Ժամանակ Երեւան» թերթի գլխավոր խմբագիր, արհեստական ամբաստանութիւններով բանտարկութեան դատապարտուած Արման Բաբաջանեան Նոյեմբեր 28-ին դիմած է Հայաստանեան եւ միազգային իրաւապաշտպան կազմակերպութիւններուն, ակնկալելով անոնց աջակցութիւն՝ զինք ազատ արձակելու ուղղութեամբ:

«Հայաստանում սկսուած քաղաքական թէժ իրադարձութիւնների նախընտրական ներկայ շրջափուլում առաւել օրհասական եւ առաջնային են դառնում մարդու իրաւունքների, հիմնարար ազատութիւնների եւ ազատ խօսքի պաշտպանութեան հիմնահարցերը», - ըստուած է Բաբաջանեանի յայտարարութեան մէջ:

Բաբաջանեան յայտնել է, որ այս տարուայ Յուլիան պատիժի 1/3-րդ կրել է ետ պայմանական վաղաժամկէտ ազատելու վերաբերեալ իր միջնորդութիւնը մերժուած էր, կ'ըսէ, «Դեկտեմբեր ամսին, ինձ վաղաժամկէտ պայմանական ազատելու հերթական հնարաւորութիւն է ընձեռուած եւ ակնկալուած եմ, որ Հայաստանի միջազգային եւ տեղական իրաւապաշտպան կազմակերպութիւնները շահագրգիռ հետաքրքրութիւն հանդէս կը բերեն Հայաստանի նախագահական նստավայրից ապօրինի հրահանգներով առաջնորդուող պետական պաշտօնեաների գործողութիւններին»:

Անցնող շաբաթավերջին ամերիկեան տոլարը Հայաստանի մէջ կրած է է նոր անկում, իր դիրքերը զիջելով հայկական դրամին:

Թէեւ ամերիկեան տոլարը վերջին շրջանին միջազգային բոլոր դրամանիշերու համեմատ անկում կը կրէ, սակայն Հայաստանի մէջ այդ անկումը տնտեսական տրամադրութեան մէջ չի տեղաւորուիր, քանի որ հայկական դրամի արժեւորումին չի հետեւիր ապրանքներու գիներու նուազում, այլ ընդհակառակը՝ այդ գիները կը բարձրանան: Ժողովուրդի մօտ կը տիրէ այն կարծիքը, որ տոլարի արժեզրկումէն կ'օգտուին իշխանական շրջանակները:

«Այս իշխանութիւնները իրենց ձեւական հեռանալուց առաջ փորձում են ինչքան հնարաւոր է շատ գումար հաւաքեն, որպէսզի ապահովեն նոյնիսկ իրենց թոռների ապագան», - Երեւանի փողոցներէն մէկուն վրայ «Ա.1+»-ի թղթակիցին ըսած է Լարետ Իսկանդարեան:

Հայաստանցիներուն շատերը կը յայտնեն, որ այլեւս կարելի չէ նոյնիսկ գոյատեւել, որովհետեւ դոլարէն ստացուած 100 տոլարը հիմա 30.000 դրամ է, նախկին 55-60.000 դրամի փոխարէն:

լում եմ, որ Հայաստանի միջազգային եւ տեղական իրաւապաշտպան կազմակերպութիւնները շահագրգիռ հետաքրքրութիւն հանդէս կը բերեն Հայաստանի նախագահական նստավայրից ապօրինի հրահանգներով առաջնորդուող պետական պաշտօնեաների գործողութիւններին»:

յութիւններու ուսումնասիրութիւնները, հաշուարկներու պաշտօնական արդիւնքները, այնպէս ոչ կառավարական կազմակերպութիւններու ուսումնասիրութիւնները:

Մարդկային զարգացման ցուցանիշը գլխավորաբար կ'որոշուի երեք բաղադրիչներով՝ կեանքի միջին տեւողութիւնը, տուեալ երկրի բնակչութեան կրթական մակարդակը եւ համախառն ներքին արդիւնքի մէկ շունչին հասնող չափաբաժինը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԹՈՒՐԹԻԱ ՆՈՅՆ ԽՄԲԱԿԻՆ ՄԷՋ

Նոյեմբեր 25-ին տեղի ունեցաւ Ֆուլթոնի 2010-ի Աշխարհի Բաժակի գտումի մրցումներու վիճակահանութիւնը, որու ընթացքին Հայաստանի եւ Թուրքիոյ հաւաքականները դասուեցան նոյն՝ 5-րդ եւրոպական խմբակին մէջ:

Նոյն խմբակին մէջ են նաեւ Սպանիոյ, Պելճիքայի, Պոսնիա-Հերցեգովինայի եւ Էստոնիայի հաւաքականները:

Հայաստանի ֆուլթոնի ֆետերացիայի փոխնախագահ Աշոտ Մա-

նուկեան յայտնեց, որ դեռ յայտնի չէ, թէ Թուրքիոյ հետ հանդիպումներու շուրջ ինչ քննարկումներ կ'ընթանան:

Յայտնենք որ, եւրոպական երկիրներու արտօնութեան գումարի մրցումներուն գծով, այս տարուայ ընթացքին նախատեսուած Հայաստան-Ատրպէյճան խաղերը չկայացան՝ վայրի շուրջ ծագած տարակարծութիւններուն պատճառաւ: Սակայն, Հայաստան-Թուրքիա խաղերու պարագային նոյն դժուարութիւնը չսպասուիր:

«Դրամը արժեւորում է, սակայն դա մեզ ձեռք չի տալիս, որովհետեւ գները օր-օրի աճում են, իսկ մենք ընկնում ենք շփոթութեան մէջ, չենք իմանում, այլեւս ինչպէս է կարելի գոյատեւել», - ըսած է Կարինէ Ասլամազեան:

Իսկ Գէորգ Նազարեանն այլ համոզուած է, որ հայ ժողովուրդի «արդար քրտինքով վաստակած գումարները որոշ իշխանաւորներ օգտագործում են իրենց անձնական բիւջաները լցնելու համար՝ ամենեւին չմտածելով ժողովրդի մասին»:

Կարէն Քալանթարեան այն կարծիքին է, որ տոլարի փոխարժէքի անկումը նախօրոք ծրագրուած է, որովհետեւ այդ մասին խօսակցութիւնները սկսած էին շատոնց:

Ան նաեւ կը յայտնէ, որ դոլարը աշխատող իր տղային պահանջած է որ այլեւս գումար չուղարկէ, որովհետեւ այն հիմա ջուրի գին ունի. «Աւելի լաւ է սոված մնանք, քան որդու քրտինքով աշխատած գումարը չգնահատուի»:



Երեւանի մէջ գործող փոխանակման կէտերէն մէկը տոլարի գինը ցոյց կու տայ 295 դրամ

այս երկրում այլեւս հնարաւոր չէ ապրել»:

Ոմանք այն կարծիքը ունին, որ տոլարի փոխարժէքի անկումը միտումնաւոր կազմակերպուած է, որպէսզի նախագահական ընտրութիւններու ժամանակ կարողանան մարդոց ձայնը գնել չնչին գումարով:

Շաբթուայ սկիզբը Երեւանի մէջ տոլարը հասած էր 290 դրամի:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԹԵԼԵԹՈՆԻ ԸՆԹԱՑՔԻՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԵՑԱՒ 15.2 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐ

Նոյեմբեր 22-ին Լոս Անճելըսի մէջ տեղի ունեցաւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի տարեկան թէլեթոնը, որու ընթացքին հանգանակուեցաւ 15 միլիոն 280 հազար ամերիկեան տոլար նուիրատուութիւն եւ նուիրատուութեան խոստում: Հանգանակուած գումարը նկատուեցաւ մրցանիշ՝ թէլեթոնի 10-ամեայ պատմութեան մէջ:

12 ժամ տեւողութեամբ հեռուեսիլի հաղորդումը Ամերիկայի մէջ փոքուցաւ տեղական արիւնքներով, իսկ աշխարհի տարածքին՝ Հայաստանի Հանրային հեռուեսիլի Ա. արիւնքով:

Հայաստանի Տաւուշի մարզի գիւղական զարգացման ծրագրին եւ Ղարաբաղի Մարտունու շրջանի վերականգնման համար նախատեսուած հանգանակութեան մասնակցելու նպատակով Լոս Անճելըս ժամանած էին Լեւոնայի Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեան, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ Արք. Մարտիրոսեան եւ ՀՀ Արտաքին Գործոց նախարար Վարդան Օսկանեան:

«Մէկ Ազգ Մէկ Ապագայ» կարգախօսին տակ հանգանակուած 15 միլիոն տոլարի մէջ բաւական մեծ էր խոշոր նուիրատուութեան խոստումներու կշիռը:

2007-ի թէլեթոնի խոշոր նուիրատուներն էին՝ Մոսկուայէն Լե-

ւոն Հայրապետեան՝ 2,5 միլիոն տոլար, Վահէ Կարապետեան՝ 1 միլիոն տոլար, Project Cure 700.000 տոլար, Լուիզ Սիմոն Մանուկեան՝ 500.000 տոլար, Հրայր Յովնանեան՝ 500.000 տոլար, Վարազ Սամուէլեան՝ 500.000 տոլար, հիմնադրամի Ֆրանսայի տեղական մարմին՝ 1,6 միլիոն տոլար, Ճորճ Բաղդամեան՝ 260.000 տոլար, Feed the Children 250.000 տոլար, հիմնադրամի Արժանութիւնի տեղական մարմին՝ 250.000 տոլար, Էստոնարտօ Էննեկեան՝ 125.000 տոլար, Արմէն Էքսերջեան՝ 200.000 տոլար, հիմնադրամի Մեծն Բրիտանիոյ տեղական մարմին՝ 200.000 տոլար, Չուրիցերիոյ հայ համայնք՝ 150.000 տոլար, ՀԲԸՄ՝ 150.000, Ճոյ Եալթզեան՝ 100.000 տոլար, հիմնադրամի Թորոնթօյի տեղական մարմին՝ 200.000 տոլար, հիմնադրամի Լիբանանի տեղական մարմին՝ 100.000 տոլար, New York Life Insurance ընկերութիւն՝ 200.000 տոլար, AXA Insurance ընկերութիւն՝ 200.000 տոլար, Ամերիկայի Արեւմտեան Թեմ՝ 50.000 տոլար:

Բացի այս նուիրատուութիւններէն Հայաստանի ժողովուրդը իր մասնակցութիւն բերած է 1,2 միլիոն տոլարով, իսկ Ղարաբաղի ժողովուրդը՝ մէկ միլիոն տոլարով: Մեծ էին նաեւ միջին նուիրատուութիւնները ու նաեւ՝ ժողովրդային մասնակցութիւնը:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԴՐԱՄԱՐԱԽԱ՞Ք, ԹԵ ԸԱՄԻՇԽԱՆԱԿԱՆ ՔԱՐՈՉ

Կարելի է ասել, որ Հայաստանի սահմանամերձ գիւղերն ու Ղարաբաղի Մարտունու շրջանն արդէն փրկուած են՝ Հայաստան համահայկական հիմնադրամի տարեկան հեռուստամարաթոնը հաւաքեց աւելի քան 15 միլիոն դոլար կամ դոլարի խոստում, ինչն առայժմ աննախադէպ ծաւալ է հեռուստամարաթոնների համար: Փրկուած են այնպէս, ինչպէս Հաղորդի շրջանը, ինչպէս Մարտակերտի շրջանը, ինչպէս Հիւսիս-հարաւ ատոմայրուղին, որոնց համար էլ փող էր հաւաքուած նախկին հեռուստամարաթոնների ընթացքում: Իսկ թէ ինչպէս են փրկուած Հաղորդի, Մարտակերտը կամ Հիւսիս-հարաւը, ցանկացողները կարող են այցելել Ղարաբաղ ու տեսնել: Այդ փրկութեան արտայայտութիւնը միայն այն քաղերը չեն, որ պատասխանատու հեռուստաընկերութիւններով ցուցադրում են, թէ ինչպէս է գերագոյն գլխաւոր հրամանատար Ռոբերտ Քոչարեանն ասենք բացում Հիւսիս-հարաւի նոր հատուածը եւ ինչպէս է պատկերուած հարթ ու մաքուր ճանապարհը: Իրականում երեւի թէ լաւ կը լինէր ցուցադրել նաեւ քաղերը նոր կառուցուած ճանապարհի այն բազմաթիւ հատուածներից, որոնք փլուզուած են դեռ մէկ տարին էլ չբոլորած: Կամ ցուցադրել քաղերը այն հատուածներից, որոնք չգիտես ինչու դեռ չեն կառուցուել, թէեւ դեռ երեք-չորս տարի առաջ յայտարարուեց, որ ճանապարհի կառուցման համար անհրաժեշտ փողը հաւաքուել է ամբողջութեամբ: Եթէ ցուցադրուեն նաեւ այդ մասերը, ապա պատկերն իսկապէս կ'ամբողջանայ:

Նոյնը նաեւ Մարտակերտի ու Հաղորդի վերականգնման ծրագրերի կապակցութեամբ, որոնք մեկնարկում են մեծ ուշացումով եւ դանդաղ տեմպով: Օրինակ, սփիւռքահայ համար, որ փող է տալիս այդ ծրագրերին, միթէ կատարուածից պակաս կարեւոր են չկատարուածի վերաբերեալ հարցերը: Ինչու են ուշանում եւ դանդաղում ծրագրերը: Արդեօք դրա պատճառն այն չէ, որ իրականում խոստացուած են գումարներ, որոնք տարուայ ըն-

թացքում այդպէս էլ չեն յատկացուում, որովհետեւ խնդիրը ոչ այնքան փող հաւաքելն է, այլ դրա իմիտացիա տեղծելը, համահայկական ակցիան համիշխանական քարոզի ծառայեցնելը՝ Հայաստանի եւ Ղարաբաղի իշխանութիւնների համար: Կամ արդեօք ծրագրերի դանդաղ ընթացքի, իսկ որոշ դէպքերում էլ պարզապէս կիսատ մնալու պատճառն այն չէ, որ Հայաստանում կատարուած է դոլարի սրընթաց արժեզրկում, ինչի հետեւանքով էլ հաւաքուած փողը մինչեւ անցնում է կոնկրետ շրջանառութեան, կոնկրետ ծրագրի իրականացման համար, փաստացի պակասում է ժամ առ ժամ: Օրինակ, Նոյեմբերի 22-ին հաւաքուած մօտ 15 միլիոն դոլարը Նոյեմբերի 22-ից մինչեւ 26-ը արժեզրկուեց առնուազն 10-15 տոկոսով: Մինչդեռ այդ փողը դեռ ճանապարհին է, դեռ նոր է «տնից դուրս» գալիս, որ ծառայի հայրենիքին: Այսինքն, այդ ընթացքում հայրենիքի հմուտ դրամավարկագէտները կը հասցնեն 15 միլիոնն իրականում վերածել հազիւ ասենք 10 միլիոնի, եւ դա լաւագոյն դէպքում:

Պարզ է, որ այդ պարագայում անհնար է պահել ծրագրերի ժամանակացույցը, որովհետեւ ասենք Մարտակերտի համար հաւաքած փողը երբ քշուելին է անում, ապա պէտք է սպասել Հաղորդի համար հաւաքած փողին, ինչ էլ նշանակում է, որ Հաղորդին էլ պէտք է սպասի Մարտունու համար հաւաքածին, կամ ասենք նրանք երեքն էլ պէտք է սպասեն, մինչեւ վերջացնեն Հիւսիս-հարաւը: Դե կարելի էր օրինակ յանուն Ղարաբաղի վերականգնման կամ Հայաստանի սահմանամերձ գիւղերի, գնալ այդ ինքնազոհութեանը: Առաւել եւս, որ նրանցից այդքան քիչ բան է պահանջուում՝ ընդամենը պահել այն փողի կուրսը, որ տալիս են ուրիշները: Մակայն այդ գոհողութիւնը կարծես թէ տեղի չի ունենում, եւ ինչքան շատ է հաւաքուած համահայկական փողը, այդքան բացում է ներհայկական ախորժակը:

ՋԵՅՄՍ ՅԱԿՈՐԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ» ԿԱՅՔԷԶ

ԱՂԲԸ ՏՆԻՑ ԶՐԱՆԷՔ. ՊԱՇԷ ՏԱՆԸ

Եւ այսպէս, Լեւոն Տէր-Պետրոսեանն ու նրան սատարող մի շարք քաղաքական ուժերի ղեկավարներ դիմել են միջազգային կառույցներին՝ խնդրելով, որ նրանք օգնեն ապահովել ժողովրդավարական ընտրութիւններ անցկացնելու երկու կարեւոր նախապայման. առաջին՝ որ քուէաթերթիկները տպագրուեն արտասահմանում, եւ երկրորդ՝ որ քուէարկողները թանաքտեսն ցուցամատը (կրկնակի կամ բազմակի քուէարկութիւն թույլ չտալու համար): Զարմանալիս այն է սակայն, որ Արտաշէս Գեղամեանը, Արթուր Բաղդասարեանը, Վազգէն Մանուկեանը եւ ՀՅԴ-ն հրաժարուել են միանալ այս առաջարկին:

Հետաքրքիր է՝ նշուած քաղաքական ուժերից որեւէ մէկը կասկածո՞ւմ է, որ այս իշխանութիւնները, սովորութեան համաձայն, ընտրութիւններից առաջ հազարաւոր «լրացուցիչ քուէաթերթիկներ» են տպելու: Որեւէ մէկը կասկածո՞ւմ է, որ եթէ քուէաթերթիկները տպագրուեն Հայաստանում, «տպաքանակը» վերահսկելն անհնար կը լինի: Կամ գուցէ այս ուժերը չգիտէ՞ն, որ վերջին բոլոր ընտրութիւնների ժամանակ իշխանութիւններն «ընտրողները» մոբիլ խմբեր էին տեղափոխում տեղամասից տեղամաս (գիւնուորականները նոյնն անում էին կուռ շարքերով): Իհարկէ գիտեն:

Քոչարեանն ու Սերժը մի քանի անգամ հասկացրել են, որ «դրսից տղայ կանչելը լաւ բան չի»: Հետաքրքիրն այն է, որ այս գուռ «տղայական» մօտեցումն իշխանութիւնները չիշում են միայն այն ժամանակ, երբ խօսքը Հայաստանում ժողովրդավարութեան վերականգնման (այսինքն՝ իրենց հեռացման) մասին է:

Իսկապէս, տարօրինակ մօտեցում է: Երբ կապի համակարգը վաճառում են օտարերկրացիներին, դա ազգային անվտանգութեանը չի սպառնում, երբ էներգետիկ ողջ համակարգը, երկաթուղին, օդանավակայանը, հանքավայրերը վաճառում են օտարերկրացիներին, դա նորմալ է, երբ հայկական դրամը տպագրում են արտասահմանում, պրոբլեմ չկայ, բայց հենց որ առաջարկ է լինում քուէաթերթիկները նոյնպէս արտասահմանում տպագրել, բոլորը դէմ են:

Ուշադրութիւն դարձրէ՛ք՝ խօսքն ընդամենը Լեւոն Տէր-Պետրոսեանի կողմնակիցների այն առա-

ջարկի մասին է, որի միակ նպատակը ժողովրդավարական ընտրութիւնների ապահովումն է: Ընդ որում, այդ առաջարկն արուել է Եւրախորհրդին, որի անդամ է եւ որի առջեւ պարտաւորութիւններ է ստանձնել նաեւ Հայաստանը:

Իսկ գուցէ առաջարկը մերժած քաղաքական ուժերն ընտրութիւնները վերահսկելու աւելի լաւ մեխանիզմ են յայտնաբերել: Գուցէ աւելի լաւ առաջարկներ ունեն: Յաւօք, որքան էլ չիշողութիւններս լարենք, Արշակ Սաղոեանի «բիւրակաւորներից» բացի այլ «մեխանիզմ» չենք չիշի: Մանաւանդ որ, այս կուսակցութիւնների անդամ յանձնաժողովականներն ու վստահուած անձինք, որպէս կանոն, ընտրութիւնները «վերահսկում են» կոմերցիոն նկատառումներով:

Ամբողջ խնդիրն այն է, որ նոյնիսկ իշխանական ուժերն են գիտակցում՝ եւս մի խայտառակ ընտրութիւնը Հայաստանի համար կործանարար կը լինի: Ուրեմն ինչո՞ւ են իշխանութիւնները հիստերիայի մէջ ընկնում, երբ Լեւոն Տէր-Պետրոսեանի թիմը այդ նոյն Եւրախորհրդին հնարաւորութիւն է տալիս ձեռնարկել քայլեր, որոնց արդիւնքում աւելի մեծ վստահութիւն կը ձեւաւորուի ընտրութիւնների արդիւնքների նկատմամբ:

Պատասխանը միակն է. իշխանութիւնները որոշել են հերթական անգամ ամենաայլանդակ ձեւով կեղծել ընտրութիւնները: Ի դէպ, որեւէ մէկը նրանցից այլ բան չէր էլ ակնկալում: Յաւալիս այն է միայն, որ դրա հնարաւորութիւնը տալիս են նաեւ իրենք իրենց ընդդիմադիր հռչակած ուժերը՝ իրենց լուռ համաձայնութեամբ:

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ
«ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆԻԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Մրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱՉԱՆԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
 ԿԱԶՔԵՆ ԽՈՍՏԱՆԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Ֆեռ. (626) 797-7680
 Ֆաքս. (626)797- 6863
 E:Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social
 Democratic Hunchakian Party of
 Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, Canada \$60 (Second
 Class), \$75.00 (Air Mail)
 Overseas \$85.00 (2nd Class Mail),
 \$125.00 (Air Mail).

All payments must be made in
 US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid
 at Pasadena CA.

Please Send Address Change To
 MASSIS WEEKLY
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104

ՆՈՐ ՈԱՍԿԱԿԱՐԸ

Երբ Սամուէլ Բաբեանը գտնուում էր անազատութեան մէջ, «Առաւօտ» թերթը, իր ուժերի ներածին չափով, նրան աջակցում էր. մեզ անհամոզիչ էին թւում (եւ հիմա էլ են այդպէս թւում) Արկաղի Ղուկասեանի դէմ նրա կազմակերպած հաբեկչութեան վերաբերեալ մեղադրանքները, այդ գործով նախաքննութիւնը եւ դատավարութիւնը: Առաւել տգեղ էր ու անպարկեշտ նրան՝ Արցախի հերոսի կոչումից զրկելը, կոչում, որը նա վատապահ էր՝ Հայրենիքին անձուիրաբար ծառայելով: Մակայն անցաւ 4,5 տարի, եւ պարոն Բաբեանը դուրս եկաւ Շուշիի բանտից, եկաւ Հայաստան ու կամաց-կամաց կրկին մերձեցաւ մեր երկրի ներկայիս իշխանութիւնների հետ, որոնք իրենց հերթին նրա համար բիզնեսի հնարաւորութիւններ ստեղծեցին:

Այժմ Ս. Բաբեանի «Դաշինք» կուսակցութիւնը տարալուծուել է ՀՈԱԿ-ի մէջ, որը յայտնի է իր աւանդական, կասէի նոյնիսկ՝ դարաւոր ամորֆութեամբ եւ բոլոր իշխանութիւնների նկատմամբ

մշտական քծնողական վերաբերմունքով: Ռամկավարների հետ երկարատեւ շփումը, հաւանաբար, խորը հետք է թողել պարոն Բաբեանի հոգում: Եւ ասա շաբաթ օրը իր «լուծարման» համագումարում նա, ըստ էութեան, յայտարարեց, որ ինքը եւ Սերժ Սարգսեանը ազատագրում էին Ղարաբաղը (որն, իհարկէ, ինքնին ճիշդ է), իսկ Լեւոն Տէր-Պետրոսեանն իր շրջապատով նրանց խանգարում էր. «Հայաստանի այն ժամանակուայ քաղաքական գործիչները եւ քաղաքական ղեկավարութիւնները կատարում էին յանցագործութիւն՝ Լեւոնային Ղարաբաղում թույլ չտալով ազատագրելու տարածքները»: Պատմական ճշմարտութեան տեսակէտից նման մօտեցումը, անշուշտ (այսպէս ասենք), կասկածելի է, բայց որպէս նախընտրական քարոզչութիւն՝ միանգամայն հասկանալի: Մտում է, որ պարոն Բաբեանը մօտակաջ շաբաթներին դառնայ Սերժ Սարգսեանի վստահուած անձը եւ ամէն օր «Հայրուրով» պատմի 1991-1997 թուականներին «քաղաքական ղե-

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
«ԱՌԱԻՕՏ»

ԼՈՒՐԵՐ

ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ ՉԻ ԱՌԱՋԱԴՐՈՒԻ

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ՀՀ առաջին արտգործնախարար Րաֆֆի Յովհաննիսեանը չի կարող առաջադրուել նախագահի թեկնածու առաջիկայ նախագահական ընտրութիւններում: Ռոբերտ Գոչարեանը մերժել է նրա քաղաքացիութեան հարցի վերաբերեալ «Ժառանգութիւն» կուսակցութեան դիմումը:



«Ժառանգութեան» աջնորդ Րաֆֆի Յովհաննիսեան

Դիմումի պատասխանը կուսակցութիւնը ստացել է նախագահի աշխատակազմի ղեկավար Արմէն Գէորգեանի ստորագրութեամբ: Յիշեցնենք, որ «Ժառանգութեան» վարչութիւնը յայտարարութիւն էր ընդունել, որով կոչ էր արել վերանայել Րաֆֆի Յովհաննիսեանի քաղաքացիութեան հարցը եւ նրա ՀՀ քաղաքացի համարել 1991 թուականից, քանի որ հենց այդ թուականից սկսած Յովհաննիսեանը բազմիցս դիմել է հայրենի իշխանութիւններին՝ իրեն քաղաքացիութիւն շնորհելու խնդրանքով: Հիմնադրման մէջ Արմէն Գէորգեանը նշել է, որ 2001-ից Րաֆֆի Յովհաննիսեանին քաղաքացիութեան շնորհումը պայմանաւորուած է եղել 1995 թուականին ընդունուած Սահմանադրութեամբ, որով արգելուել է պահպանելով մի քաղաքացիութիւն՝ դառնալ մէկ այլ երկրի քաղաքացի: Իսկ Յովհաննիսեանը ԱՄՆ քաղաքացիութիւնից հրաժարուել է միայն 2001 թուականի Ապրիլի 23-ին:

Ի դէպ, նկատենք, որ քաղաքացիութիւն նրան շնորհուց միայն 2001 թ Օգոստոս ամսին, այսինքն, մի քանի ամիս Րաֆֆի Յովհաննիսեանին գրկուած է եղել որեւէ երկրի քաղաքացիութիւնից:

Այս նրբութիւնը մեզ հետ գրոցում նկատեց «Ժառանգութեան» մամուլը քարտուղար Յովհաննիսեանը: Բայց նաեւ լիշեցրեց, որ Հայաստանը միացել է ժընեւեան կոնվենցիային, որով

յստակ կարգաւորում է ինդիւրն առ այն, որ մինչեւ քաղաքացին չունենայ յստակ երաշխիքներ, որ ստանալու է քաղաքացիութիւն, չի հրաժարուում այլ երկրի քաղաքացիութիւնից: Նամակում նաեւ յղում կայ դատական ատենաների ընդունած որոշումներին՝ նշելով, որ դրանք պահպանում են իրենց գործողութեան ուժը (խօսքը 2003 թուականի բողոքարկման մասին է):

Յովհաննիսեանը «Ա1+»-ին փոխանցեց, որ այս որոշումը յստակ քաղաքական որոշում է, որով հերթական անգամ փաստուած է այն հանգամանքը, որ իշխանութիւնների համար Րաֆֆի Յովհաննիսեանի առաջադրումը խիստ անցանկալի է:

Ինչ վերաբերում է կուսակցութեան նախաձեռնելիք յաջորդ քայլերին, ապա դա կ'որոշուի առաջիկայ շաբաթուայ ընթացքում հրաւիրուելիք վարչութեան նիստում:

Կ'որոշուի նաեւ, թէ կուսակցութիւնը որ թեկնածուին կը սատարի: Ի դէպ, նկատենք, որ ՀՀ նախագահին նստավայր ուղարկուած դիմումի տակ ստորագրել էր «Ժառանգութիւն» կուսակցութեան գրասենեակի տնօրէն Կլեկչեանը: Իսկ Րաֆֆի Յովհաննիսեանը «21 հարց Ռոբերտ Գոչարեանին» անամակիր լինելու նրան ուղղուած որեւէ նամակի տակ չի ստորագրել:

«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ»-Ը ԱՌԱՋԱԴՐՈՒՄ Է ԱՐՏԱՇԷՍ ԳԵՂԱՄԵԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Երեքշաբթի, Նոյեմբեր 27-ին «Ազգային միաբանութիւն» կուսակցութեան նախագահութիւնը որոշեց 2008 թուականի նախագահական ընտրութիւններում առաջադրել կուսակցութեան առաջնորդ Արտաշէս Գեղամեանի թեկնածութիւնը:

Հիմնաւորելով նախագահութեան որոշումը՝ «Ազգային միաբանութեան» ներկայացուցիչները իրենց ելուցիչներում խիստ քննադատութեան ենթարկեցին Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին:

«Եթէ մենք խօսում ենք Լեւոն Տէր-Պետրոսեանի, նրա թիմի մասին, ապա իրականում նկատի ունենք ընդհատակէն գանձագող բիզնեսմեններին եւ պոպուլիստ ունեւնչիւններին», - իր ելուցիչում յայտարարեց «Ազգային միաբանութեան» փոխնախագահ Ալեքսան Կարապետեանը: - «Անշուշտ, լեւոնապաշտների գաղափարախօսութիւնը եւ շահերը ժողովրդի իղձերի հետ ընդհանուր ոչինչ չունեն, նրանց փափագած նպատակը, երկիրը ցնցումների եւ շանտաժի ենթարկելով, «ով մեզ հետ չէ, մեր թշնամին է» կարգախօսով, իրենց կուռքին նորից պետութեան գլուխ կանգնած տեսնելն է»:

Ինքը՝ Արտաշէս Գեղամեանը, ասաց, թէ Լեւոն Տէր-Պետրոսեանը կրկնում է այն, ինչն ինքը 5 տարի

շարունակ ասել է Ազգային ժողովի ամբիոնից՝ աւելացնելով ընդամենը երկու նոր եզր՝ «կազմաքանդել» եւ «աւազակապետութիւն»:

«Ազգային միաբանութեան» առաջնորդին յատկապէս զայրացրել էր վերջին որակումը. - «Բան ունես ասելու, ասա՛ Ռոբերտ Գոչարեանին, ասա՛ Սերժ Սարգսեանին: Իրենց վարած քաղաքականութիւնը, հայոց պետականութիւնը հանգիստ թողէք»:

Հարցին, թէ ինչու է հենց Լեւոն Տէր-Պետրոսեանն ընտրուել որպէս քննադատութեան թիրախ, Գեղամեանը արձագանքեց. - «Ազգային միաբանութիւն» կուսակցութիւնը հաւասարապէս մերժում է թէ՛ նախորդ եւ թէ՛ գործող իշխանութիւններին»:

Գեղամեանը հաստատեց, որ վերջերս հանդիպել է վարչապետ Սերժ Սարգսեանի եւ նախագահ Ռոբերտ Գոչարեանի հետ: «Հանրապետութեան նախագահի հետ հանդիպումը պայմանաւորուած էր Սեպտեմբերի 7-ին «Ազգային միաբանութիւն» կուսակցութեան հնչեցրած առաջարկով, որ անհրաժեշտ է բոլոր քաղաքական ուժերը, լինի իշխանութիւն թէ ընդդիմութիւն, հանդիպեն եւ քննարկեն հարցերը: Մեր այդ յայտարարութեանը հանրապետութեան նախագահը դրական է արձագանքել, եւ մենք հրաւերը ընդունել ենք»:

ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ.
«ՄԵՆՔ ԳՆՈՒՄ ԵՆՔ ՅԱՂԹԵԼՈՒՄ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Արթուր Բաղդասարեանը, ում զլիւսաւորած «Օրինաց երկիր» կուսակցութիւնը մերժեց Լեւոն Տէր-Պետրոսեանի՝ իրեն որպէս նախագահի թեկնածու միանալու կոչը, ուրբաթ օրը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցազրոյցում յայտարարեց, որ իրենք ընտրութիւնների են գնում՝ յաղթելու:



Նախագահի թեկնածու Արթուր Բաղդասարեան

«Մենք գնում ենք յաղթելու եւ մենք յաղթելու ենք», - ասաց նա:

Բաղդասարեանը ասաց, որ ընդդիմադիր դաշտի հիմնական թեկնածուներ է համարում իրեն եւ Լեւոն Տէր-Պետրոսեանին. - «Ինչպէս էլ իշխանութեան բեւեռում, այնպէս էլ իշխանութեան բեւեռում կարող են ձեւաւորուել երկուական բեւեռներ... Իշխանութեան դէպքում արդեն իսկ ակնյայտ է Հայաստանի հանրապետական կուսակցութեան դիրքորոշումը եւ Դաշնակցութեան դիրքորոշումը: Ընդդիմադիր բեւեռում այսօր ձեւաւորում է առաջին նախագահի շուրջ որոշակի ուժերի համակցութիւն, եւ այսօր մենք ապացուցել ենք, որ մեր կուսակցութեան օգտին պատրաստ է առնուազն քուէարկել Հայաստանի 150 հազար քաղաքացի»:

Բացառելով ընտրութիւնների անցկացումը մէկ փուլով՝ Բաղդասարեանը, հարցին, թէ ով կ'անցնի երկրորդ փուլ, պատասխանեց. - «Ես չեմ ուզում թերագնահատել որեւէ հակառակորդի. կարող է լինել եւ Սերժ Սարգսեանը, եւ այլ թեկնածուներ, բայց ընդամենը մի քանի մարդու մէջ է լինելու ընտրութիւնը, եւ այն էլ՝ մէկ ձեռքի մատերի վրայ հաշուած, եւ նոյնիսկ գուցէ դա էլ աւելանայ»:

Հարցին, թէ եթէ երկրորդ փուլում յայտնուեն ինքն ու Սերժ Սարգսեանը, վատաբանելու է այսօրուայ վարչապետի քայլերը, Բաղդասարեանը արձագանքեց. - «Բա եթէ կան թերութիւններ, արատներ, սխալներ, իհարկէ ասելու ենք... Հայաստանում տեղի է ունենում օլիգոպոլ տնտեսական համակարգի խոչորացում: Այն ողորմութիւնը, այն ընտրական կաշառքները, որոնք բաժանեցին ժո-

ղովրդին, այսօր՝ այս գնդի խայտառակ թանկացման պայմաններում, մարդկանց քթից են բերում»:

«Նոր թանկացումներ են սպասուելու», - շարունակեց նա: - «Առաջիկայում նոր տարի է, յաջորդ տարի գազի գնի թանկացում է սպասուում: Եւ ժողովուրդը պէտք է իմանայ, որ, իրօք, մենք պէտք է ոչ թէ ընտրակաշառքով ձեւաւորենք իշխանութիւնը: Մենք պէտք է իրօք ձեւաւորենք ժողովրդի իշխանութիւնը, եւ կախուած չլինի տարբեր կլանային ստորաբաժանումների հետեւողական դիրքորոշումներից»:

Դիտարկմանը, որ անցած տարուայ ընթացքում մի շարք խոշոր գործարարներ դուրս եկան «Օրինաց երկիր» խմբակցութիւնից, եւ հարցին, թէ ի՞նչ միջոցներով են կազմակերպելու նախընտրական քարոզարշաւը, կուսակցութեան առաջնորդը արձագանքեց. - «Այսօր խրախուսում է դաւաճանութիւնը, որովհետեւ մարդկանց կանգնեցնում են անպատիւ ընտրութեան առջեւ. ասում են՝ կա՛մ գնա դաւաճանիր ընկերջող, կա՛մ բիզնեսդ ձեռքիցդ կը խլենք: Այսինքն՝ գործարարի կարծիքը պէտք է հարիւր տոկոսով համընկնի իշխանութեան կարծիքի հետ... Ինչ վերաբերում է մեր ֆինանսական հարաւորութիւններին, ես չեմ էլ թաքցնում եմ, որ կան շատ գործարարներ, միջին, ոչ թէ խոշոր գործարարներ՝ փոքր, միջին գործարարներ, որոնք մեր ընկերներն են, մեզ հետ պայքարել են, եւ ամէն մարդ պատրաստ է իր մասնակցութիւնը բերել... Նաեւ մենք կազմակերպելու ենք հրապարակային դրամահաւաքներ»:

ԿԱՆՉԵԼ ԵՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆ

Ուրբաթ-շաբաթ օրերին Երեւանի ռադիոկայանական բաժիններ են հրաւիրուել մի խումբ մարդիկ, որոնք բանաւոր զգուշացուել են, որ չմասնակցեն հանրահաւաքներին եւ չկազմակերպեն այլոց մասնակցութիւնը: Հակառակ դէպքում, նրանց սպառնացել են. «լաւ չի լինի»:

Հետաքրքրական է, որ հրաւիրուածները որեւէ առնչութիւն չեն ունեցել վերջին հանրահաւաքների կազմակերպմանը, իսկ որոշները անգամ չեն մասնակցել դրանց: Նրանց թուում եղել են Ժիրայր Սէֆիրեանի զլիւսաւորած «Հայ կամաւորականների համախմբման» անդամներ: Տպաւորութիւն է ստեղծուում, որ նախընտրական շրջանում տեղի ունեցող հանրահաւաքները այնքան են վախեցրել վարչախմբին, որ վերջիններս կորցրել են իրականութիւնը սթափ գնահատելու ունակութիւնը եւ անիմաստ գործողութիւններ են կատարում

Հաղորդում է «Հայ կամաւորականների համախմբում»-ը:

3972 ԱՆՕԹԵԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Աղէտից 19 տարի անց 3972 անօթեկան ընտանիք կայ միայն Գիւմրի քաղաքում: Գիւմրու ժուռնալիստների «Ասպարէզ» ակումբում այսօր այդ տուեալն է հրապարակել քաղաքապետարանի ներկայացուցիչը: Գիւմրու քաղաքապետարանի բնակարանների հաշուառման եւ բաշխման բաժնի պետ Անուշաւան Պապիկեանը յայտնել է, որ Գիւմրիում 2007 թուի Նոյեմբերի 27-ի դրութեամբ հաշուառուած է 3972 անօթեկան ընտանիք: Մասնաւորաբար, մինչեւ 2004 թուի Մարտի 1-ը քաղաքապետարանում հաշուառման են անցել 2802 ընտանիք, ապա մինչեւ 2004 թուի տարեվերջ հաշուառուած անօթեկանների թիւը հասել է 4639-ի, 2005 թուի ընթացքում հաշուառուել է 190, 2006-ի ընթացքում՝ 149 եւ 2007 թուի ընթացքում (մինչեւ Նոյեմբերի 26-ը)՝ 41 ընտանիք:

ԼՈՒՐԵՐ

ԱՄՅ-Ն ՅԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՒՍ 5.2 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ԿԱՐԿ Է ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ ԿՐՃԱՏԱՆ ՅԱՄԱՐ

Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) գործադիր խորհուրդը աւարտել է Հայաստանի տնտեսական ցուցանիշների հինգերորդ դիտարկումը Աղքատութեան կրճատման եւ Տնտեսական Աճի (ԱԿՏԱ) եռամեայ ծրագրի ներքոյ, ինչը թոյլ է տալիս պայմանագրի շրջանակներում Հայաստանին տրամադրել եւս շուրջ 5.2 միլիոն դոլար: Արդիւնքում՝ ծրագրի ընդհանուր յատկացումը կը կազմի շուրջ 31.4 միլիոն դոլար:

ԱՄՀ-ի հայաստանեան գրասենեակի հաղորդագրութեան համաձայն, «Աղքատութեան կրճատման եւ Տնտեսական Աճի վարկերը տրամադրուած են տարեկան 0.5 տոկոսով եւ ենթակայ են վերադարձի 10 տարի յետոյ 5.5 տարուայ յետաձգմամբ մայր գումարի վճարման գծով»:

Ուաշինգտոնում կայացած քննարկումների աւարտին ԱՄՀ-ի փոխնախագահ Էն Խորհրդի նախագահի պաշտօնակատար Տակատոչի կատոն յայտարարել է. - «Հայաստանը շարունակուած է օգուտ քաղել երկնիշ տնտեսական աճից, ցածր սղաճից, ցածր հարկաբեւոյնային պակասուրդից եւ բարենպաստ պահուստային դիրքից: Աւելին, զգալի առաջընթաց է արձանագրուել աղքատութեան կրճատման գծով: Մեծ չափերի մասնաւոր դրամական փոխանցումները մեղմացրել

են արագ աճող ներմուծման ազդեցութիւնը ընթացիկ հաշուի պակասուրդի վրայ: Միջնաժամկէտ հեռանկարը դրական է, եւ առկայ են բարենպաստ պայմաններ ներդրումների համար»:

«Հայաստանի կենտրոնական բանկը որդեգրել է դրամավարկային քաղաքականութեան խստացման քաղաքականութիւնը՝ սղաճը զսպելու համար, միեւնոյն ժամանակ պահպանելով ձկուն փոխարժէքային ուժի մը», - ասել է ԱՄՀ-ի խորհրդի նախագահի պաշտօնակատարը:

Տակատոչի կատոն համոզմունք է յայտնել, որ Հայաստանի իշխանութիւնները «մտադիր են շարունակել կառուցուածքային բարեփոխումները ծրագրի իրականացումը եւ վերացնել լայնածաւալ տնտեսական աճին խանգարող վերջին խոչընդոտները»:

«Արտաքին մրցունակութեան բարելաւման համար կարեւոր են ներքին մրցակցութեան եւ արտադրողականութեան բարձրացմանը միտուած քաղաքականութիւնները: Հարկային վարչարարութեան բարելաւման ծրագիրը կը նպաստի հարկային խուսափումների կրճատմանը եւ գործարար միջավայրի բարելաւմանը», - ընդգծել է Արժույթի Միջազգային Հիմնադրամի խորհրդի նախագահի պաշտօնակատարը:

«ԴԱՇԻՆՔ»-Ը ՈՐՈՇԵՑ ՄԻԱԴՐՈՒԹԵԼ ՅՈՒՎԻ ՅԵՏ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Շաբաթավերջին կայացած «Դաշինք» կուսակցութեան 2-րդ համագումարը որոշեց միաւորուել Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցութեան (ՀՌԱԿ) հետ:

Լեւոնային Ղարաբաղի նախկին պաշտպանութեան նախարար Սամուէլ Բաբեանի գլխաւորած կուսակցութիւնը ստեղծուել էր երկու տարի առաջ ու ունի 20 հազար անդամ:

Ակնկալուած է, որ Դեկտեմբերի 5-ին նոյնպիսի որոշում կը կայացնի նաեւ Ալբերտ Բագեանի ղեկավարած «Ազգային Վերածնունդ» կուսակցութիւնը, եւ Յունուարի սկզբին երեք կուսակցութիւնները կը կոչուեն Հայաստանի ռամկավար Ազատական Կուսակցութիւն:

Միասին նրանք կ'ունենան մօտ

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆԸ ԱՆԿԱԶՄԱԿԵՐՊԵՐ

ԵՐԵՒԱՆ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»:
Լոս Անճելեսի հայ համայնքի կողմից կազմակերպուող «Armenian Music Awards» երաժշտական մրցանակաբաշխութիւնը շաբաթ օրը կայացաւ, սակայն այն աւելի քան անկազմակերպ էր: Վաղ առաւօտեան ժամը 5-ից սկսուած ուղիղ եթերը յազեցած էր եթերային եւ կազմակերպչական խոտանով, այն տեղ-տեղ առանց ձայնի ուղեկցութեան էր հեռարձակուած, ընդմիջուած ընդհանրապէս եւ այլն:

31 հազար անդամ (ՀՌԱԿ-ը ունի 9 հազար, իսկ «Ազգային Վերածնունդ»-ը՝ 2 հազար անդամ):

Համագումարի իր ելոյթում Սամուէլ Բաբեանը ասաց, թէ միաւորումը «կապուած է առաջիկայ նախագահական ընտրութիւնների հետ»:

«Եթէ մենք ցանկանում ենք, որ ազգային ազատական ուժերը իրենց դերակատարութիւնը ունենան Հանրապետութեան եւ աշխարհասփիւռ հայութեան քաղաքական կեանքում, ապա մի կողմ պէտք է դնեն իրենց յաւակնութիւնները եւ սկսեն միաւորման գործընթաց», - ասաց Բաբեանը:

Միաւորուած ՀՌԱԿ-ը, Բաբեանի խօսքերով, համագործակցելու է բոլոր ուժերի հետ՝ ելնելով իրենց «ծրագրի դրոյթներից եւ ազգի ապագայից»:

Նշենք, որ մրցանակաբաշխութեանը «Լաւագոյն երգիչ» անունակարգում կրկին յաղթեց Անդրէն, «Լաւագոյն երգչուհի» մրցանակը ստացաւ Սիրուշոն, իսկ «Լաւագոյն դուետին» արժանացաւ Արագ Դարէ եւ Արմինկա զոյգը:

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐՊԻ ՅՈՒՇԱՅԱՍԱԼԻՐԸ 40 ՏԱՐԵԿԱՆ Է



Մեծ Եղեռնի գոհերի յուշահամալիրը Միծեռնակաբերդի վրայ

Մեծ Եղեռնի գոհերի յուշահամալիրը Միծեռնակաբերդում բացուել է 40 տարի առաջ՝ 1967 թուականի Նոյեմբերի 29-ին՝ շատ շուտով ուխտավայր դառնալով ցանկացած հայի համար: Այս տարեկացին է նուիրուած այսօր Երեւանում բացուած երկօրեայ միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել է Հայաստանի գիտութիւնների ազգային ակադեմիայի Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտը:

Գիտաժողովի բացմանը ներկայ էին Ազգային Ժողովի փոխնախագահ Տիգրան Թորոսեանը, Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսեանը, Հայաստանի Մշակույթի նախարար Յասմիկ Պօղոսեանը, բարձրաստիճան այլ անձինք:

Գիտաժողովի աշխատանքներին կը մասնակցեն նաեւ Նորուեգիայից, Ճապոնիայից եւ Գերմանիայից հրաւիրուած մասնագէտներ:

Յուշահամալիրի հեղինակները

րը Սաշուր Քալաշեանն ու Արթուր Թարխանեանն են: Թէեւ 1965 թուականին յայտարարուած մրցութիւնը նրանց ներկայացրած նախագիծը ընդամենը երրորդն էր, որոշիչ է եղել, ինչպէս գիտաժողովի իր գեկոյցում պատմեց Հայաստանի ազգային արխիւի տնօրէն Ամատունի Վիրաբեանը, ճարտարապետ Վարազդատ Յարութիւնեանի խօսքը:

«Եթէ ճշմարիտ է այն միտքը, թէ ճարտարապետութիւնը քարացած երաժշտութիւն է, ապա մեզ մնում էր արժանի երաժշտութեան համար փնտռել եւ գտնել արժանի շրջանակ», - իր ելոյթում ասաց Սաշուր Քալաշեանը:

«Սա համամարդկային յուշարձան է», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց Հայաստանի ճարտարապետների միութեան նախագահ Մկրտիչ Մինասեանը: - «Ոչ միայն Հայաստանում, ինձ թւում է աշխարհում նման հզօր ազդեցութեամբ յուշարձանները շատ քիչ են»:

ՅԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՍՏԱՏԵՑ 2008-Ի ՊԵՏԱԿԱՆ ԲԻԻՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՁՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Կառավարութեան նիստում հաստատուեց 2008 թուականի պետական բիւջէի լրամշակուած, վերջնական տարբերակը, որը Ազգային Ժողովի վերջնական քննարկմանն ու բուժարկութեանը կը ներկայացուի Նոյեմբերի 27-ին:

Ֆինանսների փոխնախարար Պաւել Սաֆարեանի խօսքերով՝ փոփոխութիւնները հական չեն. - «Պակասեցուել է եկամուտները 727 միլիոնի չափով եւ համապատասխանաբար պակասեցուել են նաեւ ծախսերը: Այս պակասեցումը հիմնականում պայմանաւորուած է արտարժույթի նկատմամբ Հայաստանի Հանրապետութեան դրամի փոխարժէքի՝ Նոյեմբերի 1-ի դրութեամբ առաջացած կուրսով»:

Օրէնսդրութեան համաձայն, երբ կառավարութիւնը բիւջէն ներկայացնում է Ազգային Ժողով, այն հաշուարկում է տուեալ ամսուայ առաջին օրուայ փոխարժէքով, իրավիճակը փոխուել է՝ փոխուել են մօտեցումները:

«Վերահաշուարկուել են բոլոր այն եկամտային յօդուածները, որը մենք արտարժույթով էինք ստանում, խօսքը յատկապէս վերա-

բերում է դրամաշնորհներին», - պարզաբանեց փոխնախարարը՝ շարունակելով. - «Հաշուարկուել է, թէ ինչքան է կորուստները լինելու: Նշեմ, որ, եթէ Սեպտեմբերի 1-ի դրութեամբ Միացեալ Նահանգների դոլարի փոխարժէքը 336 դրամ էր, Նոյեմբերի 1-ի դրութեամբ՝ 325 դրամ է»:

Պաւել Սաֆարեանը ասաց նաեւ, որ նախագծի այս տարբերակում ընդգրկուած են նաեւ Ազգային Ժողովի պատգամաւորների առաջարկութիւնները. - «Շուրջ 3 միլիարդ 747 միլիոն դրամի չափով առաջարկութիւններ են ընդունուել պատգամաւորների եւ Ազգային Ժողովի խմբակցութիւնների կողմից ներկայացուած առաջարկութիւններից»:

Այսպիսով, բիւջէի նախագծի վերջնական տարբերակում առաջարկուած է 2008 թուականի պետական բիւջէն հաստատել եկամուտների գծով՝ 744 միլիարդ, ծախսերի գծով՝ 820 միլիարդ դրամ: Դեֆիցիտը՝ 76 միլիարդ դրամ:

Արտարժույթի փոխանկման կէտերում, մինչդեռ, այսօր ԱՄՆ-ի մէջ դոլարը առաջարկուած է վաճառել 300 դրամով:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շարքաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

ՇԱՐՑԱԶՐՈՅՑ

ԼՈՒՐՁ ԲԵԻԵՈՒԸ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԱՆԿԱՆ ՊԱՏԳԱՍԱԻՈՐ
ՎԻԿՏՈՐ ԴԱԼԼԱՔԵԱՆԻ ՀԵՏ

- Պարոն Դալլաքեան, ինչպէ՞ս էք գնահատում քաղաքական վերջին զարգացումները:

- Ակնյայտ է որ ՀՀ ներքաղաքական կեանքի թիւ 1 ինդիւրը նախագահական ընտրութիւններն են, եւ այդ ընտրութիւնների հնարաւոր մասնակիցների կազմը պայմանականօրէն կարելի է դասակարգել հետեւեալ կերպ՝ գործիչներ, որոնք ղեկավարել եւ կանգնած են Ղարաբաղեան շարժման ակունքներում՝ Լեւոն Տէր-Պետրոսեան, Սերժ Սարգսեան, Վազգէն Մանուկեան, եւ գործիչներ, որոնք քաղաքական ասպարէզ են իջել աւելի ուշ՝ Արտաշէս Գեղամեան, Արթուր Բաղդասարեան, Արամ Կարապետեան, Տիգրան Կարապետեան: Պատմութեան քմահաճոյքով ամենատուր եւ դժման դիմակալութիւնն արդեն առկայ է հենց Ղարաբաղեան շարժման երբեմնի լիզերների միջեւ: Սա վկայում է, որ 1988-ից սկսուած համաժողովրդական շարժման համաժողովրդական հաւանութեանն արժանացած գաղափարները, բախուելով ոչնչալ իրականութեան հետ, իրականացման տեսանկիւնից որոշ իմաստով լրջօրէն դեֆորմացուել են եւ վերաիմաստաւորման ու սրբազրումների կարիք ունեն: Այդ տեսակէտից՝ ես հեռու եմ նախկին համախոհների ներկայիս կարծի դիմակալութիւնն ընկալել որպէս ոմանց կողմից պարզունակ ձեւով ներկայացուող անձնաւորուած հակամարտութիւն կամ ուսանալիս ներկայիս հակաուսանալիսների կոնֆլիկտ, որի հանգուցալուծումը պատկերուած է պետութեան համար վտանգաւոր ձեւով, երբ հակամարտող կողմերից մէկը անհրաժեշտաբար պարտադրուած է ջախջախել միւսին եւ հասարակութեանը ներկայացնել կապիտուլացուած ու ոչնչացուած թշնամու: Որքան էլ խորը լինի Շարժման ղեկավարների միջեւ անդունդը, եւ ինչքան էլ կոշտ լինեն միմեանց հասցէին հնչող գնահատականները, Լեւոն Տէր-Պետրոսեանը, Սերժ Սարգսեանը եւ Վազգէն Մանուկեանը, երբ փոխհրաձգութեան ռեսուրսը սպառեն, հրապարակաջօրէն պատասխանելու են Չ հիմնարար հարցերի՝ ո՞րն է Հայաստան պետութեան կառուցման մոդելը, եւ ո՞րն է ԼՂՀ հարցի



հայնապատ լուծման բանալին: Այս քննութիւնը պէտք է յանձնեն բոլոր թեկնածուները: Տէր-Պետրոսեան, Սարգսեան, Մանուկեան եւեակի համար լուրջ մրցակիցներ կարող են լինել, մասնաւորապէս, Գեղամեանը, Բաղդասարեանը, Արամ Կարապետեանը: Այս տեսակէտից չի կարելի բացառել որեւէ սիւրպրիզ եւ թերազնահատել որեւէ գործչի:

- Բայց չէ՞ք կարծում, որ արդեն ակնյայտ է, որ բեւեռը ձեւաւորուում է Լեւոն Տէր-Պետրոսեանի շուրջ, ու հենց նրա առաջնորդութեամբ է համաժողովրդական ալիքը բարձրանում:

- Իմ բոլոր պրոգնոզներում նշել եմ, որ ընդդիմութեան միասնական թեկնածուն ցանկալի, բայց անիրականանալի է, եւ յայտնել եմ տեսակէտ, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի շուրջ կարող է ձեւաւորուել ընդդիմադիր լուրջ բեւեռ: Եւ այն կարծիքին եմ, որ այդ լուրջ բեւեռը գոյութիւն ունի: Մնում է, որ մնացած թեկնածուներն էլ գիտակցեն այդ հանգամանքը: Եւ նրանք պէտք է որոշեն՝ միանայ՞լ, թէ՞ չմիանալ այս լուրջ բեւեռին:

- Լեւոն Տէր-Պետրոսեանն իր ելոյթներից մէկում ասաց, որ հարկաւոր է դեմոնստրել գործող արատաւոր համակարգը: Ինչպէ՞ս կայ դուք պատկերացում այդ դեմոնստրը:

- Այո, այս արատաւոր համակարգը պէտք է ենթարկել

դեմոնստրի: Ընտրութիւնների արդիւնքում Հայաստանում կարող է ստեղծուել իւրօրինակ իրավիճակ, երբ գործող արատաւոր համակարգի դեմոնստրի հնարաւորութիւնը կարող է վերապահուել այդ համակարգի ճարտարապետների կամ կատարելագործողների ներկայացուցիչներից ունէ մէկին: Հանգամանքների բերումով, այդ համակարգի խոցերը ձեւաւորուել են Տէր-Պետրոսեանի իշխանութեան տարիներին եւ մեծապէս կատարելագործուել Քոչարեանի իշխանութեան օրօք: Այս պահին անիմաստ եմ համարում գործող համակարգի ստեղծման ու մոդեռնիզացիայի գործում որեւէ անհատի դերակատարութեան չափի քննարկումը, առաւել եւս՝ այդ անձի դատափետումը: Յոյս ունեմ, որ նախագահի հնարաւոր թեկնածուները գիտակցում են, որ պետութեան կառուարման ներկայիս մոդելն անհեռանկարային եւ անարդիւնաւէտ է, ու այն պէտք է արմատապէս փոխել: Փոփոխութիւնները կարող են լինել ներքեւից՝ ընդդիմութեան կողմից, եւ վերեւից՝ իշխանութեան նախաձեռնութեամբ: Դեմոնստրի այս եղանակների նախապատուութեան հարցը պէտք է որոշի ժողովուրդը: Չնայած ցանկացած համեմատութիւն կաղում է, բայց պատմութիւնից կարելի է վկայակոչել 1 ուշագրաւ դէպք: ԽՍՀՄ նախկին ղեկավար Խրիւշչովը, որը ստալինեան համակարգի ծնունդ էր եւ չալտի էր ստալինեան տեւորի տարիների ռեպրեսիաներին իր ակտիւ մասնակցութեամբ, հետագայում դարձաւ ստալինիզմի գերեզմանափորը եւ պատմութեան մէջ մտաւ որպէս ռեֆորմատոր, ժամանակի չափանիշներով դեմոկրատական ազատութիւնները խրախուսող գործիչ: Յատկանշական է, որ երբ 1964 թուականին Բրեժնեւը կազմակերպեց Խրիւշչովի պաշտօնանկութիւնը, վերջինս չալտարարեց, որ ինքը ստեղծել է մի համակարգ, որի ժամանակ հնարաւոր դարձաւ ԽՍՀՄ պատմութեան մէջ առաջին անգամ ոչ թէ բռնի մեթոդներով, այլ

քուէարկութեամբ պաշտօնանկ անել պետութեան ղեկավարին: Խրիւշչովը դա համարել է իր ամենամեծ ծառայութիւնը երկրին:

- Լեւոն Տէր-Պետրոսեանը լուրջ մեղադրանքներ ներկայացրեց գործող ռեժիմին, եւ հիմա տեսնում ենք, թէ ինչ մակարդակի պատասխաններ են հնչում: Ինչպէ՞ս կայ գնահատում երկու կողմերի ելոյթներն էլ:

- Կարծում եմ՝ ընտրութիւնների հետ կապուած պէտք է Յ կարեւոր թէգեր հիմքում դնել: Ինձ համար ոչ այնքան կարեւոր է, թէ ով կ'ընտրուի, այլ աւելի կարեւոր է, թէ ինչպէս կ'ընտրուի: Այսինքն՝ ես կարեւորում եմ նախագահի լեզուի մութեան հարցը, որովհետեւ եւս մէկ ոչ լեզուի նախագահ, եւ Հայաստանը կարող է ունենալ լուրջ պրոբլեմներ արտաքին մարտահրաւէրների առջեւ: Իմ 2-րդ դիտարկումն այն է, թէ ինչպէս պէտք է իրականացուեն ՀՀ-ում բարեփոխումները: Բոլորը գիտեն, թէ ինչը պէտք է փոխուի, բայց շատ կարեւոր է՝ ինչպէս պէտք է փոխել: 3-րդ՝ կարծում եմ, որ պէտք է տեղի ունենայ ոչ թէ կոմպրոմիսների պատերազմ, այլ ծրագրերի ու գաղափարների մրցակցութիւն: 4-րդ՝ ես շատ կարեւորում եմ իւրաքանչիւր գործչի կողմից նախեւառաջ ինքնաքննադատութեամբ ընտրական կամպանիային մասնակցելը:

- Բայց Լեւոն Տէր-Պետրոսեանը կոմպրոմիսների չի անցել եւ լաւ էլ ինքնաքննադատութեամբ զբաղուում է, իսկ հակառակ կողմից անընդհատ ինչ-որ յիշեցումներ են սպառնում անել, Սերժ Սարգսեանն էլ յայտարարում է, որ հանդուրժողակամութեան ու սիրոյ մթնոլորտ է պէտք ձեւաւորել ու փոխադրել փորձում է հետապնդել Լեւոն Տէր-Պետրոսեանի աջակիցներին:

- Իշխանութիւնների կողմից Տէր-Պետրոսեանի նկատմամբ իրականացուող հակաքարոզչութիւնը գերազանցապէս տալիս է հակառակ էֆեկտ, եւ չեմ կարծում, որ դրանով իշխանութիւնների թեկնածուի ռեյտինգն աճում է:

ԼՈՒՍԻՆԷ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Massis Weekly on the Internet
www.massisweekly.com
updated every Friday

ATLANTIS RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS
ARABIAN NIGHTS

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS JELINA AND THE SAHLALAH DANCERS.

authentic cuisine
full hookah bar
VIP membership
full cocktail bar
live belly dancing
live music and DJ

ATLANTIS RESTAURANT AND NIGHT CLUB
626.449.4599
162 N. SIERRA MADRE BLVD.
PASADENA, CA 91107

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՐԱՆ, ՓԱՔԻՍՏԱՆ, ՊՈՒԹՕ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂԻՆԱՆ

Այս օրերուն, մանաւանդ Ամերիկայի Միացեալ Նահանգներու հետ սերտօրէն առնչուած, քաղաքական լուրջ հարցեր կան որոնց լուծման փնտրտութիւնները բաւականին բարդ կը թուին: Ասոնք առաւելաբար կը բխին Սեպտեմբեր 11էն, 2001 թուականին, ահաբեկչական գործողութեան իբրեւ անմիջական արդիւնք, Ամերիկայի նախաձեռնած, եւ «համաշխարհային ահաբեկչութեան դէմ պատերազմ»-ի նշանաբան կրող գործողութիւններէն:

Որոնք են սոյն պատերազմէ ամենէն տաք կեդրոնները այսօր:

Առաջին առթիւ, անշուշտ իրաքեան կացութիւնը կը ներկայանայ իբրեւ ամենէն տաք կեդրոնը: Երբ տարուայ մէջ մտած սոյն պատերազմը կը շարունակէ իր անորոշ, եւ մտահոգիչ ընթացքը, թէեւ վերջերս լաւատեսութեան փոքր նշաններ կ'ուրուագծուին: Այս նշանները կը վերաբերին, ոչ թէ իրաքի ղեկավար քաղաքական շրջանակներու, որոնց մօտ տակաւին չի նշմարուիր ազգային ընդհանրական գիտակցութիւն մը իրենց հայրենիքը ողբալի այս կացութեանէն դուրս հանելու, այլ ժողովրդային շրջանակներու, այսինքն սիւննի-շիի համայնքներու, որոնք, ըստ երեւոյթին, տեղ-տեղ միացած են՝ օտար, դուրսէն եկած - Սուրիա, Իրան, Ալ-Քալիտա, եւ այլ մարտնչողներու դէմ դնելու, յատկապէս Ալ-Անպար ճանչցուած շրջանէն եւ Պաղատի մէջ: Մեր համոզումն է որ եթէ երբեք ի վերջոյ իրաք դուրս պիտի ելլէ իրեն պարտադրուած այս պատերազմէն, ներհամայնքային - սիւննի-շիի-քիւրտ համերաշխ գոյակցութիւն մը պէտք է հաստատուի, երկրի քաղաքական, տնտեսական եւ համայնքային հարստութեանց արդար բաժանումով մը, որ ցարդ անկարելի կը թուի: Նոյնիսկ Սատամ Զիւսէյնի օրով, ստեղծուած յարաբերական գոյակցութիւնը բռնատիրական պարտադրութիւն մը կը հանդիսանար: Ամէն պարագային, իրաքի փրկութեան միակ ուղին իրաքեան, եւ ոչ թէ ամերիկեան, լուծում մը կրնայ ըլլալ, այդ հարուստ, սակայն դժբախտ երկրի ներհամայնքային գոյակցութեամբ:

Մեր այսօրուայ մտահոգութեան եւ ուշադրութեան ենթակայ տազնապի սուր կեդրոնները, իրաքէն անդին կ'երթան, սակայն, ընդ-

հանուր կերպով առնչուած են անոր:

ԻՐԱՆԻ ՊԱՐԱԳԱՆ

Ամերիկան, եւ իրեն հետ, Եւրոպական որոշ երկիրներ, Անգլիա, Ֆրանսա եւ Գերմանիա լուրջ հարց ունին Իրանի հետ: Ամերիկայի պարագային, իրան կը ներկայացնէ կրկնակի տագնապ - մէկը կը վերաբերի իրանի բերած պատերազմական նեցուկին, իրաքեան

ամերիկեան ճնշումներուն եւ «տիրապետութեան» ենթարկուի, մանաւանդ երբ ունի Ռուսիոյ եւ Չինաստանի նեցուկը:

Իրանի այս բաժինը աւարտելէ առաջ, պէտք է անդրադառնալ նաեւ այն շուկաներն եւ ենթադրութեանց, որ քաղաքական իր կեանքի աւարտէն առաջ, նախ Պուշկինայ իրանեան «արկածախնդրութիւն» մըն ալ փորձել, իրանի վրայ յարձակելու փորձ մը, որ շատերու կողմէ «սխալ» կը նկատուի, ինչ-

մը գրաւելով, պիտի ընդդիմանային իրեն: Անկախ ասոնցմէ, Մուշարրաֆ ունի նաեւ Աֆղանիստանէն փախած թալիպանները, ինչպէս նաեւ Ալ-Քալիտայի հաւատարիմ լեռնային շրջանները: Այնպէս որ Մուշարրաֆ լուրջ ընդդիմախօսներ ունի ներքին ճակատի վրայ, որոնք կը սպառնան իր իշխանութեան: Ամերիկայի դաշնակից մը ըլլալու հանգամանքը աւելի իր դէմ կը հանէ այս ուժերը: Միւս կողմէ, Մուշարրաֆի կողմէ առնուած որոշ քայլեր - Փաքիստանի Գերագոյն Ատաեանի նախագահի պաշտօնը արձակումը, երկրէ ներս Սահմանադրութեան առկախումը եւ պատերազմական վիճակի ստեղծումը, եւ ցոյցերու արգիլումը, եւ իր քաղաքական հակառակորդ, նախկին վարչապետ Պէնազիր Պուշտի տնային կալանքի տակ դրուելը, բաւականին պայթուցիկ կացութիւն մը ստեղծեցին երկրէ ներս, լուրջ մտահոգութիւն պատճառելով Ամերիկային: Ամերիկա որոշ դժգոհութիւն կը յայտնէ Մուշարրաֆի քայլերուն դէմ, յստակօրէն պահանջելով որ ժողովրդավարութիւն հաստատուի երկրէ ներս եւ ստեղծուած վիճակը վերջ գտնէ: Նաեւ կը պահանջուի որ Մուշարրաֆ լքէ բանակի հրամանատարի իր պաշտօնը, վերադառնայ «սիւննի» վիճակի, եւ շուտով կազմակերպէ ընտրութիւններ, սեմոքրատական սկզբունքներով: Այս ուղղութեամբ Ամերիկայի իր արտաքին գործոց պատասխանատու Քոնտոլիզա Ռայսի կողմէ, եւ Փաքիստանի ուղարկուած իր օդանավան, Նեկրօբոնիթի կողմէ, Մուշարրաֆին հակացուցին իրենց դժգոհութիւնը եւ պահանջները:

Հիմա, հարցը հոն է որ որքան Մուշարրաֆ տրամադիր կ'ըլլայ ամերիկեան պահանջները գոհացնելու եւ ենթարկուելու ամերիկեան եւ այս առթիւով նաեւ անգլիական «խրատները» լսելու: Առ այժմ Փաքիստան նոր ընտրութիւններ պիտի կազմակերպէ 2008 թուականի Յունուար-Փետրուարին, սակայն կը մնայ ճշդելի թէ Մուշարրաֆ պիտի հրաժարի՞ բանակի իր հրամանատարութենէն, վերահաստատէ Սահմանադրութիւնը, բանտարկեալները ազատէ, եւ սկսի գործակցելու Պէնազիր Պուշտիի հետ, այս վերջինը վարչապետ նշանակելով: Օրերը բաւական չլի են, եւ լաւատեսութիւնն ալ դժուար նախատեսելի: Ամերիկան Փաքիստանէն ներս ալ կրնայ կորսնցնել, եթէ իր դաշնակից սեպուած Մուշարրաֆը հրապարակէն քշուի...:



Մահմուտ Ահմէտիմեմատ, Պէնազիր Պուշտի եւ Փէրվիզ Մուշարրաֆ

Ամերիկայի ընդդիմադիր կողմերն, յատկապէս շիի համայնքի մարտնչողներուն, իսկ մուսուլմաններն, իրանի հետապնդած հիւլէական, երեւութապէս խաղաղ նկատակներով, ուժի փնտրտութիւններուն, որոնց վերաբերեալ Ամերիկան եւ իր կողմնակից երկիրները լուրջ կասկածներ ունին, այսինքն իրան ի վերջոյ կը հետապնդէ հիւլէական ուժը ձեռք ձգելու քաղաքականութիւն մը, որ ամենեւին ընդունելի չէ Արեւմուտքի եւ Եւրոպայի կողմէ: Հետաքրքրականը հողն է որ Ռուսիան եւ Չինաստանը, փոխանակ հակադրուելու Իրանի, նոյնիսկ կը գործակցին Ահմէտիմեմատի ընդդիմին հետ: Այս վերջինն ալ բաւականին ճարպիկ խաղ կը խաղայ, իրեն գործակից ունենալով Ռուսիան, Չինաստանը եւ իր վենեզուէլացի նախագահ բարեկամը, որ չորրորդ անգամ ըլլալով, երկու տարուայ մէջ, իրան կ'այցելէ: Այդ երկու նախագահները Պուշտին ռիսերիմ թշնամիներն են: Թէեւ Ամերիկայի եւ իրանի միջեւ որոշ խօսակցութիւններ սկսած են տեղի ունենալ, սակայն ցարդ ոչ մէկ շօշափելի արդիւնքներու չեն հասած: Նոյնպէս ՄԱԿ-ի եւ Հիւլէական Յանձնախումբի միջամտութիւնները, երբեմն սպառնալիքներով, ցարդ ապարդիւն անցած են իրանի տրամադրութիւնները փոխելու: Ի վերջոյ իրան Հիւլէական Քորէյա մը կամ Քազաքիի Լիպիա չէ որ

պէս իրաքեան պատերազմը: Միամտութիւն պիտի ըլլար յուսալ որ իրանեան եւ ամերիկեան փոխյարաբերութիւնները կարող են տրամաբանական լուծումներ գտնել, գէթ առ այժմ... Այսքան իրանի մասին:

ՓԱՔԻՍՏԱՆ ԵՒ ՊՈՒԹՕ

Մինչեւ տակաւին վերջերս, Ամերիկայի համար, իր սկսած «համաշխարհային ահաբեկչութեան դէմ պատերազմի» ամենէն վստահելի դաշնակից կը նկատուէր Փաքիստանի նախագահ Փէրվիզ Մուշարրաֆը, որ երկրի իշխանութեան կը տիրանար 1999ի պետական հարուածով մը: Պէտք է հոն արձանագրել որ իբրեւ երկիր, Հնդկաստանէն բաժնուելէ ասդին, 60 տարիներ առաջ, մեծ մասամբ ղեկավարուած է զինուորական իշխանութիւններով: Նոյնն է պարագան ներկայիս: Փ. Մուշարրաֆ թէ երկրի եւ թէ բանակի շէֆն է եւ ունի կրկնակի հանգամանք: Առ ի տեղեկութիւն, պէտք է հոս արձանագրել որ իր քաղաքական «հերոս»ը, արդի թուրքիոյ հիմնադիր Մուսթաֆա Քէմալը եղած է, այս իմաստով որ Մուշարրաֆ կ'ուզէ աշխարհիկ երկիր մը հաստատել իսլամ կրօնք ունեցող երկրէ մը ներս: Այս փորձը, Մուշարրաֆի կողմէ, պիտի հանդիպէր իսլամ ծայրայեղականներու, որոնք ժամանակ մը առաջ, «կարմիր մզկիթ»

ABA Insurance Services advertisement with logo and 33th Anniversary text.

Advertisement for ABA Insurance Services featuring a cartoon character and contact information.

Ա.Դ.Յ.Կ. 120-ԱՄԵԱԿ

Ա.Դ. ՇՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ 120-ԱՄԵԱԿԻ ՓԱՅԼՈՒՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

Շաբաթ, Նոյեմբեր 17-ի երեկոյան Թորոնթոյի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ սրահէն ներս տեղի ունեցած պաշտօնական ճաշկերոյթի մը ընթացքին, փայլուն շուքով նշուեցաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան 120-ամեակը:

Հայկական տարբեր գաղթօճախներու մէջ կատարուող սօնակատարութիւններու ծիրէն ներս տեղի ունեցած սոյն հանդիսութեան ներկայ էին ՄԴԶԿ կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Սեդրակ Աճէմեան եւ ատենադիր Ընկ. Գրիգոր Խոտանեան: Այս առթիւ Լոս Անճըլէս ժամանած էին նաեւ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի անդամներ՝ Ընկ. Վահէ Աջապահեան եւ Ընկ. Վարդան Քորոզլեան:

Երեկոյին ներկայ էին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ռամկավար Ազատական Կուսակցութեան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ գաղութային բազմաթիւ այլ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Ներկայ էին նաեւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Գանատայի Թեմական Խորհուրդի ատենապետ Տիար Արա Պոյաճեան ու իր կողակիցը, Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Զարեհ Աւագ Քահանայ Զարգարեան եւ վերապատուելի Գրիգոր Կարապետեան:

Օրուայ հանդիսավար Ընկ. Արսէն Գասապեան նախ հրաւիրեց ներկաները յոտնկայս ունկնդրելու Գանատայի, Հայաստանի եւ Հնչակեան քայլերգները, որոնք դաշնա-

րապետեան դաշնակի վրայ ընկերակցութեամբ իր մօր՝ Տիկ. Թինա Կարապետեան:

Օրուայ գլխաւոր բանախօսն էր Ամերիկայէն ժամանած Ընկ. Գրիգոր Խոտանեան, որ իր ելոյթին սկզբնաւորութեան պատմական ակնարկ մը կատարելով ներկայացուց Հնչակեան Կուսակցութեան անցած ուղիին:



Պատուոյ Գիրքերու արժանացած ընկերներ եւ ազգայինները ընկ. Սեդրակ Աճէմեանի հետ

«1887 թուականի Նոյեմբերին Հայաստան աշխարհի երկնակամարին վրայ վեր խոյացաւ Հայ իրականութեան մէջ առաջին քաղաքական-յեղափոխական կազմակերպութիւնը՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, որ այս օրերուն կը բոլորէ իր հիմնադրութեան 120-ամեակը:

Ժընեւի մէջ, խումբ մը Կովկասահայ ուսանողներ, Աւետիս Նազարբէկեանի գլխաւորութեամբ, հիմը դրին շարժումի մը, որ կարողացաւ դիմանալ տասնամեակներու փորձաքարերու առջեւ ու մնաց միշտ երիտասարդ ու կենսունակ, տարբեր ժամանակներու եւ պայմաններուն մէջ:

Հնչակեան Կուսակցութեան

նորոգեցաւ Հայ ժողովուրդի ընդհանրական շահերով ու իր մասնակցութիւնը բերաւ համագային բոլոր ճակատագրական պայքարներուն»:

Անդրադառնալով Հայաստանի ներկայ իրավիճակին Ընկ. Խոտանեան ըսաւ. «Յաւալի է, որ այսօր Հայաստանի մէջ բացակայ է իսկական ժողովրդավարութիւնը:

վրայ»:

Խօսելով ներկայի քաղաքական դիրքորոշումներու մասին Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը յայտնեց որ, Հնչակեան Կուսակցութեան համար ներկայիս հիմնական նպատակը կը հանդիսանայ Հայաստանի մէջ ժողովրդավարութեան վերահաստատումը:

«Կը պահանջենք, որ յառաջիկայ նախագահական ընտրութիւնները տեղի ունենան ազատ, արդար, թափանցիկ եւ հաւասար պայմաններու մէջ, ուր բոլոր թեկնածուները կ'ունենան ընտրարշաւ կատարելու եւ ժողովուրդի մօտ քարոզչութիւն տանելու հաւասար միջոցներ», - ըսաւ ան ու յայտնեց որ յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն Հնչակեան Կուսակցութիւնը պիտի պաշտպանէ առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի թեկնածութիւնը:

Վերջաւորութեան Ընկ. Գրի-



Թորոնթոյի մասնաճիւղի ատենապետ Ընկ. Պետրոս Մուշեան

գոր Խոտանեան յայտարարեց, «Հնչակեան Կուսակցութիւնը 120-ամեայ իր փորձով հարուստ, պատրաստ է համագործակցելու ազգային մեր միւս կուսակցութիւններուն հետ, հետապնդելու հայ ժողովուրդի ընդհանրական շահերը»:

Ընկ. Գրիգոր Խոտանեանի ելոյթէն ետք բեմ հրաւիրուեցան ՄԴԶԿ Կեդրոնի ատենապետ Ընկ. Սեդրակ Աճէմեան եւ Թորոնթոյի մասնաճիւղի ատենապետ Ընկ. Պետրոս Մուշեան, իսկ մը վաստակաշատ ընկերներուն յանձնելու 120 ամեակի Պատուոյ Գիրքեր:

Ընկ. Աճէմեան իր շնորհաւորական խօսքին մէջ յայտնեց, որ Կուսակցութիւնը 120 ամեակի Պատուոյ Գիրքեր շնորհելով կու գայ յայտնելու իր երախտագիտութիւնը երէց ընկերներուն, որոնք իրենց երկարամեայ նուիրեալ աշխատանքով ծառայած են Մայր Կուսակցութեան, Հայ ազգին ու հայրենիքին:

Պատուոյ Գիրքերու արժանացան Ընկերներ՝ Գրիգոր Մուշեան, Նշան Խորտոյլեան, Յարութիւն Աբարտեան, Երուանդ Պալեան (յետ մահու) եւ Սարգիս Աւագեան (յետ մահու):

Այս առթիւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան յուշատախտակներ յանձնուեցան իսկ մը մը ազգայիններու, որոնք երկար տարիներու ընթացքին իրենց օժանդակութիւնը բերած են Կուսակցութեան աշխատանքներուն, «Լուսաբաց» թերթի հրատարակութեան, եկեղեցւոյ, դպրոցի եւ



Գլխաւոր բանախօսն Ընկ. Գրիգոր Խոտանեան

մուրի վրայ կատարեց Տիկ. Թինա Կարապետեան:

Ընկ. Գասապեան իր բացման խօսքին մէջ յայտնեց որ սոյն սօնակատարութիւնը կու գայ անգամ մը եւս հաստատելու Կուսակցութեան կարեւոր դերակատարութիւնը գաղութի կեանքէն ներս եւ այս առթիւ շնորհակալութիւն յայտնեց այն բոլոր ազգայիններուն, համակիրներուն եւ կուսակցական ընկերներուն, որոնք իրենց մասնակցութիւնը կը բերէին հանդիսութեան:

Ապա, բեմ հրաւիրուեցաւ Տիկ. Մատլէն Գարլօզեան, որ ասմունքեց Անուշաւան Գաբրիէլեանի քերթուածը՝ նուիրուած Հնչակեան 6-րդ գունդի հրամանատար հերոս Աւշարեանին:

Տ. Զարեհ Աւագ Քահանայ Զարգարեանի օրհնութեան աղօթքէն ետք տեղի ունեցաւ ճաշի սպասարկութիւն, որու ընթացքին թրոմփեթի վրայ երաժշտական կտորներ ներկայացուց Դաւիթ Կա-

հրապարակ գալով, Հայ ժողովուրդի կեանքէն ներս կը յայտնուէր քաղաքական լուրջ ծրագրով, իրապէս համագային տարողութեամբ եւ զանգուածային անդամակցութեամբ կուսակցութիւն մը, որ իր քաղաքական եւ յեղափոխական գործունէութեամբ բախտորոշ դեր պիտի ստանձնէր իր պատկանած ժողովուրդի կեանքէն ներս: Դեր մը գոր տակաւին կը շարունակէ իսպառ իր հիմնադրութեանէն այսօր տարիներ ետք:

Իր պատմութեան ընթացքին Հնչակեան Կուսակցութիւնը առաջ-

Ընտրական բոլոր գործընթացները, ըլլան անոնք նախագահական թէ խորհրդարանական տեղի կ'ունենան համատարած խախտումներով ու կեղծիքներով եւ ժողովուրդը կորսնցուցած իր հաւատքը՝ մի քանի տոլարով կը վաճառէ իր ձայնը:

«Դատական համակարգը, որ կոչուած է գործելու անկախ գործադիր իշխանութենէն, պարզ ժողովուրդի համար ըլլալու պաշտպան եւ ապաստան, այդ համակարգը կը գտնուի նախագահական պալատի ամբողջական վերահսկողութեան տակ, կատարելով անոր հրամանները: Հոն ուր չկայ արդարադատութիւն, չկայ ազատութիւն, չկայ տնտեսական հաւասարու-



թիւն եւ մանաւանդ չկայ հաւատք երկրի ու անոր ապագային նկատմամբ: Այս իսկ պատճառաւ կը շարունակուի արտագաղթը Հայրենիքէն ու մեր ժողովուրդի գաւակները կ'երթան թափառելու Մոսկուայի, Եւրոպայի, Լոս Անճըլսի եւ նոյնիսկ Թուրքիոյ փողոցներուն վրայ:

Որոշուեցաւ Հոկտեմբեր 21-ին Հալէպէն Իտալիա մեկնել, որուն վրայ Սահակ Կաթողիկոս քաղաքի Քառասուն Մանկանց եկեղեցին երթալով աղօթեց, եւ ապա տրտում եւ տիտուր կառքերը յառաջացան վերջիշեալ եպիսկոպոսներու եւ վարդապետներու հետեւորդութեամբ եւ 20 գինուորներու ուղեկցութեամբ: Բարեբախտաբար Իտալիա բնակութիւնը միայն այդ գիշերը կ'ըլլար, եւ յաջորդ օր յատուկ հրամանով Հալէպ կը վերադառնային բոլորը, ուրկէ՝ Երուսաղէմ կը մեկնէին Հոկտեմբեր 27-ին, ուր Սահակ Բ. «պատուաւոր կերպով», չըսելու

համար հակասամանադրական կերպով եւ Հայ Եկեղեցւոյ կանոններուն բոլորովին հակառակ, կը ստանձնէր իր նորելուկ պաշտօնը իբրեւ Կաթողիկոս-Պատրիարք Հայոց Թուրքիոյ, Օսմանեան պետութեան հնարած մէկ իսլամական կանոնադրութեան համաձայն, միացնելով հոգեւոր բոլոր չորս աթոռները ու կեդրոնացնելով անոնց իշխանութիւնները իր անձին վրայ որպէս պետր Կ. Պոլսոյ եւ Երուսաղէմի պատրիարքութեանց, ինչպէս նաեւ Սիսի եւ Աղթամարի կաթողիկոսութեանց՝ խզելով բոլորը Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն:

Գաղթականի գաւազանը ձեռքին, Խաղ Աջապահեան վարդապետ անցաւ ընդ հուր եւ ընդ սուր կողքին մնալով իր մեծաւորին, երբ 1916-1922 տարիներուն Երուսաղէմի պատրիարքութեան ենթակայ եկեղեցիներուն տեսուչ կարգուեցաւ իր հոգեւոր պետին կողմէ: Կաթողիկոսական փոխանորդի պաշտօններ վարեց աքսորեալ եւ վտարանդի Աթոռին՝ 1929-ին Դամասկոսի մէջ, եւ 1933-ին Անտիոքի թեմին մէջ: Խաղ վարդապետ 1929-ին Հալէպի մէջ Սահակ Կաթողիկոսի եպիսկոպոսութեան բարձրանալէ անմիջապէս ետք, նոյն տարին Երուսաղէմի պատկանող թեմերու Կիլիկիոյ Կաթողիկոսութեան փոխանցումի գործառնութեանց մէջ պատասխանատու եպիսկոպոսը հանդիսացաւ: 1936-ին Սահակ Կաթողիկոսէն արքեպիսկոպոսութեան բարձրացաւ, ու անկէ ետք իր կեանքն ու նուիրեալ ծառայութիւնը ի սպաս դրաւ նորահաստատ Անթիլիասի Կաթողիկոսարանին որպէս Կաթողիկոսական Փոխանորդ եւ Տեղապահ:

1941-ին Խաղ Արքեպիսկոպոս դժուարին պայմաններու տակ, երբ արդէն Կիլիկեան Աթոռի տեղապահի պաշտօնը կը վարէր Պետրոս Սարաճեան Կաթողիկոսի անակնկալ վախճանումէն ետք, կարողացաւ Հայաստան ու Մայր Աթոռ ճամբորդել մասնակցելու համար Ազգային-Եկեղեցական ժողովին որ պիտի կատարէր նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը, որ սակայն չիրագործուեցաւ եւ ժողովը յետաձգուեցաւ պատգամաւորներու թիւին նուազութեան պատճառով, ինչպէս նաեւ եպիսկոպոսներու բացակայութեան՝ ճամբորդական խոչնդոտներու հետեւանքով, Բ. Աշխարհամարտի այդ դժուար տարիներուն:

Աջապահեան Արքեպիսկոպոս Տեղապահի պաշտօնը հինգ տարիներ յաջողութեամբ վարեց, 1940-1945, ու կարողացաւ յաջողցնել ընտրութիւնը Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսին, որ 1945 թուին Ամերիկայէն Անթիլիաս կը ժամանէր Հայրապետական Օծում ստանալու եւ ստանձնելու իր կաթողիկոսական պաշտօնը: Յաջորդող տասնամեակին ան մնաց սերտ գործակիցը Գարեգին Կաթողիկոսին վարելով միանգամայն Լիբա-

նանի կաթողիկոսական փոխանորդութիւնը 1946էն մինչեւ 1951, եւ ապա կաթողիկոսական ընդհանուր փոխանորդութիւնը Գարեգին Կաթողիկոսի հիւանդութեան շրջանին, մինչեւ վերջնոյս վախճանումը՝ 1952 թուին:

Նոյն տարին Խաղ Արքեպիսկոպոս Տեղապահ ընտրուեցաւ, պաշտօն գոր վարեց երեք տարի, որու ընթացքին, 1954-ի Մայիսին պատգամաւորութեան գլուխն անցնելով մեկնեցաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին նախագահելու համար վախճանեալ Գէորգ Զ Չորեքճեան Կաթողիկոսի յուղարկաւորութեան: Այլապէս նաեւ ան իր աւանդապահ եւ պատկառելի ղեկավարութեան տակ արդիւնաւէտ գործունէութիւն ծաւալեց Կիլիկեան Աթոռը պահելով բնականոն ընթացքի մէջ՝ արդիւնաւէտ գործունէութիւն ծաւալելով: Դպրեվանքը տուաւ իր տարեկան հունձքը, տնտեսապէս բարօր շրջան մը բոլորեց կաթողիկոսարանը, միաբաններ մնացին իրենց պաշտօններուն վրայ ու թեմերն ալ իրենց գործունէութեամբ ծաղկեցան:

Խաղ Արքեպիսկոպոս իր 70 տարիքին իբրեւ աւանդապահ եւ հայրախնամ Տեղապահ հետապնդեց նաեւ կաթողիկոսի ընտրութեան ընթացքը, որ դիւրին չէր: Զայն առաջնահերթ նկատելով Աթոռի մասին մտահոգութիւններ յայտնեց քաջութեամբ եւ բծախն-

դիր կերպով, յաճախ խմբագրականներ ստորագրելով եւ կարեւորութեամբ անդրադառնալով նոյն խնդրոյն, ըսելով թէ «Կաթողիկոսական ընտրութիւնը պայքարի հարց մը չէր, այլ՝ համերաշխութեան եւ համագործակցութեան անհրաժեշտութիւն»: Ան վտանգ մը կը նախատեսէր եւ կը ջանար զգուշացնել որ Աթոռը ազդեցութեանց չենթարկուէր, զի ան «ո՛չ ունեւորինն է եւ ո՛չ ալ չբաւորին, ո՛չ կուսակցականին եւ ո՛չ ալ անկուսակցականին, այլ հաւասարապէս բոլորին»:

Այս կարեւոր նպատակը ի մտի ունենալով Տեղապահը քանիցս փորձեց, հրահանգեց միաբանական ժողովներ գումարեց, յանուն միաբանութեան ժողովական պատգամաւորները ընտրել տուաւ որպէսզի թեմերը ձեռնարկէին պատգամաւորներու ընտրութեանց, որոնք իրենց կարգին որոշեալ թուականին Աթոռ գալով պիտի կատարէին արդէն իսկ ուշացած կաթողիկոսական ընտրութիւնը: Խաղ Արքեպիսկոպոսի կողմէ կատարուած մի քանի յետաձգումները անհաճոյ եւ անընդունելի նկատուեցան շատերու կողմէ, որոնց պատճառը կուսակցութեանց հակընդդէմ դիրքերէն կուգար:

Երեք տարիներու տատանում-

Շարք էջ 17



Blue Cross of California takes the worry out of health care.

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Life Insurance by BC Life & Health Insurance Company
- Individual and Family Plans
- HSA-Compatible Plans by BC Life & Health Insurance Company
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Integrated Workers' Compensation by Employers Compensation Insurance Company
- Medicare Supplement Plans

Call now and let me help take the worry out of your health care!

HARUT DER-TAVITIAN
 Authorized Independent Agent
 1807 W GLENOAKS BLVD. #202
 GLENDALE, CA 91201
 (818) 502-3233
 HARUT@EXCELHYE.COM
 WWW.EXCELHYE.COM
 CA Insurance
 License #0B28270



Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

ԱՅԺՄԵԼԱԿԱՆ ՆԻԹԵՐ

ԻՍԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

Ո՞Վ Է ԱՍՏՈՒԱԾ, ԶՈՐ ԿԸ ՊԱՇՏԵՆՔ

ՎԱՐԴԱՆ Ա.Ի. ՔՀՆՅ. ՏԻԻԼ ԿԵՐԵԱՆ

Այս շնչող տիեզերքին Արա-
րի՞չը, թե՛ նոյնինքն՝ տիեզերքը:
Թե՛ այս գեղատեսիլ ու տեսարժան
բնութիւնը կամ արարչագործու-
թեան Հեղինակը:

Աստուած նիւթ է եւ հոգի,
ինչպէս իր ձեռակերտ բանաւոր
արարածը, որ մարմին եւ հոգի է,
որով՝ կը հակակշռէ ու կը կառա-
վարէ ինքնութիւնը:

Աստուած նախալուստեան է,
իր նիւթական եւ աննիւթական
էութեամբ: Աստուած անհունու-
թիւնն է, անմահութիւնը, անվախ-
ճան ժամանակը, անծնունդ, անե-
ղանելի, անսկիզբ, աննկարագրելի
եւ անպարունակելի:

Աստուած լոյսը եւ խաւարը
չստեղծեց, այլ՝ ինքն է լոյսը ու
խաւարը, դաշտերը եւ լեռները
չհաստատեց, այլ ինքն է լեռները
եւ դաշտերը, ինքն է գիշերը եւ
ցորեկը, ինքն է չորս եղանակները,
ինքը՝ գետերը եւ ծովերը, ինքը՝
երկիրն ու երկինքը, ինքը՝ բովան-
դակ ու բազմաճառագայթ ՏԻԵ-
ԶԵՐՔԸ:

Աստուծոյ միակ հայրախ-
նամ ստեղծագործութիւնը՝ իր հրա-
շակերտ բանաւոր արարածն է եւ
կենդանական աշխարհը:

Աստուած՝ իր նիւթական էութե-
ամբ կը յատկանշէ իր աստուա-
ծային բնութեան չորս հակասական
տարրերը, հողը, օդը, ջուրը, արեւը:

Ամէն ինչ, որ գրաւիչ ու
գեղեցիկ է եւ ճառագայթող տիե-
զերքի մէջ, Տիեզերակալ Աստուծոյ
ԻՆՔՆՈՒԹԻՒՆՆ է:

Աստուած կը հակակշռէ ու կը
կառավարէ մարդը եւ անբան անա-
սունները, որ չգայթին իր օրէնքնե-
րէն:

Աստուած իր տաճարը եւ գա-
հակալութիւնը հաստատած է մար-
դուն հոգիին ու սրտին մէջ, որ
առաջնորդէ մարդուն կեանքը՝ դէ-
պի իր երջանիկ նախասահմանու-
մը, որ անմահութիւնն է:

Ոչ մէկ մահկանացու, մար-
դուն ծագումէն ասդին, կրցած է
անմահանալ, բացի Գողգոթայի Դա-
տապարտեալէն: Ոչ հին կտակարա-
նի մարգարէները, ոչ Նոր կտակա-
րանի Առաքեալները, ոչ մէկ մար-
տիրոս, սուրբ եւ արդար մարդ:
Ամէնքն ալ անցած են երկրի հորի-
զոնէն անդին, մեղքին փորձու-
թիւններէն վիրաւոր ու մրոտած:

Քրիստոս՝ ցոյց տուաւ մարդ-
կութեան իր կրած նախատինքնե-
րով, իր չարչարանքներով, խաչին
վրայ բեւեռեալ իր արեան հեղու-
մով, անհամեմատելի անձնագոհո-
ղութիւն:

Քրիստոսի ինքնութենէն բխած
անխառն ու անարատ սէրը՝ մարդ-
կային հոգիին աստուածային ար-
տայայտութիւնն է, որ բարեպաշտ
հոգիներու մէջ կը ստեղծէ համբու-
րելի ներդաշնակութիւն:

Քրիստոսի սէրը կը բուրդ առա-
քինութիւն, մարդասիրութիւն, անձ-
նագոհողութիւն:

Աշխարհային բոլոր սէրերը, ծնո-
ղական, ընկերային, սիրային, աղքա-
տիկ սէրեր են, յարաբերական եւ
փաղաքշական, որ զԱստուած եւ Քրիս-
տոսը կը խաբեն, մարդը եւ մարդկու-
թիւնը կը մոլորեցնեն եւ երկիրը կը
վերածեն քառսի ու գեհեմի:

Քրիստոս՝ սիրեց ու պաշտեց
զԱստուած, անխառն ու միակտուր
սիրով: Եթէ այս ջերմեռանդ փա-
րումով չպաշտենք զԱստուած, բան

մը չենք ըլլար տուած Աստուծոյ եւ
մենք ալ բան մը չենք արժեք:

Տիեզերակալ Աստուծոյ բա-
ցայայտումներն են, եղանակներու
փոփոխութիւնները, երկրաշարժե-
րը, փոթորիկները, հեղեղները, տե-
ղատարափ անձրեւները եւ ձիւնե-
րը, շանթերը եւ բազում այլ երե-
ւոյթներ, որոնք կը կատարուին
որոշ նպատակներով:

Մարդ արարածն ալ, որպէս
հոգի եւ մարմին, իր ֆիզիքական
գործողութիւններով, մանրանկար՝
փոքր Աստուած մըն է, որ կը
հակակշռէ ու կը կառավարէ իր
մարմինը եւ իր ինքնութիւնը,
ենթակալ Տիեզերակալին օրէնքնե-
րուն:

Ես որպէս հոգեւորական, այս-
պէս կը հաւատամ Աստուծոյ գոյու-
թեան, որ կարող է, անսինն մոլո-
րակները անհունութեան մէջ իրենց
դիրքերուն վրայ պահել իր կամ-
քին համաձայն:

Հին կտակարանի ՄՆՆՈՂ ԳՐՔԻ
էջերուն մէջ կերտուած Աստուածը,
սուտ Աստուած մըն է, որ կը
հակասէ ճշմարտութեան, վերջին
տառին հերքումով:

Աստուծոյ համար գոյութիւն
չունի ժամանակի մէջ, օրերու բա-
ժանում: Տիեզերակալը ինքն է
ժամանակը իր անվախճան տեւո-
ղութեամբ:

* * *

Մարդը կը ծնի հողէն, հոգիով
եւ մարմնով ու իր կենաց շրջանը
աւարտելէ ետք, երկրի վրայ, հոգի-
ով ու մարմնով միաժամանակ կը
վերադառնայ հողին: Հող էր նա-
խապէս եւ հող կը դառնայ, ըստ
եկեղեցւոյ վկայութեան:

Անմահութիւնը աժան բան մը
չէ, որուն կարենաս դիւրին տիրա-
նալ: Անմահութեան սերմերը հոս
երկրի վրայ պիտի ցանես եւ հոգե-
ւոր բերքը պիտի քաղես յաւերժու-
թեան մէջ:

Սիրոյ գործերը եւ հանրան-
ուէր ծառայութիւնները մարդը կը
պատրաստեն անմահութեան եւ իր
նոր կեանքին առջեւ կը բացուին
յաւիտենական կեանքին ոսկեգօծ
հորիզոնները երկրի վրայ, ճառա-
գայթող վաստակիդ փառաւորու-
մով ապագայ բոլոր սերունդներու
կեանքին մէջ:

Քրիստոս՝ խոստացաւ երկ-
րորդ այցելութեամբ պատուել եր-
կիրը: Խնդիր չէ իր գալը կամ
չգալը: Ձախաւեր գուշակութիւն-
ներ կը կատարուին իր յայտնու-
թեան, միամիտ հաւատացեալները
հրասթափութեան եւ յուսախա-
փութեան մատնելով՝ հաւատքին
վաշխառունները:

Եթէ Քրիստոս կարենար նա-
խագուշակել, քրիստոնեայ կոչուած
աշխարհը, սատանային աւելի պի-
տի չարանար ու բարբարոսնար,
այդպիսի խոստում մը չէր հրապա-
րակեր: Որովհետեւ այս անգամ իր
այցելութիւնը, վատահօրէն պիտի
ընդունուէր, ոչ թէ որոտալի ծա-
փերով, այլ առաւել սպառնալիք-
ներով եւ նախատինքներով Քրիս-
տոնեայ աշխարհին կողմէ:

Քրիստոսէ առաջ, հայեր կա-
լին, բայց թափառաշրջիկներ էին,
տոհմերու բաժանուած, առանց
առաջնորդութեան, առանց մտա-
ւորականութեան եւ ղեկավարու-
թեան, անկազմակերպ ժողովուրդ
մը, որ կրնար երկրի մակերեսէն
ջնջուիլ, կարգ մը կորուսած ժողո-
վուրդներու դժբախտ ճակատագ-
րով:

Շնորհիւ Քրիստոսի Սիրոյ եւ
հաւատքի յեղափոխութեան, ան-
կազմակերպ հայութիւնը դարձաւ
ժողովուրդ եւ ունեցաւ հոգեւոր
գարթոնք: Մնան Ս. Սահակներ եւ
Մեսրոպներ, Շնորհալիներ եւ Նա-
րեկացիներ, Կոմիտասներ եւ Դուր-
եաններ: Դարձանք ազգ եւ պետու-
թիւն, ինքնուրոյն եկեղեցի եւ ան-
կախ հայրենիք:

Քրիստոսի Աւետարանին հա-
ւատքով, յաւերժութեան ճանա-
պարհին վրայ կը գոյատեւէ հայու-
թիւնը, ծնունդ տալով բազմատա-
ղանդ զաւակներու, որոնք այսօր,
բազմաճառագայթ փառքերը կը
կազմեն վերելքի ու յաւաճողի-
մութեան ճանապարհին վրայ:

Աստուած երկու անփոխարի-
նելի պարզեւներ շնորհած է իր
բանաւոր ձեռակերտին: Կեանքը եւ
մահը:

Եթէ մահ գոյութիւն չ'ունե-
նար եւ մարդ մահացու ցաւերու
մէջ գալարուէր, մեռնիլ ուզէր եւ
չկարենար ազատիլ իր տառապա-
լից վիճակէն, կրնաք երեւակայել
իր ճակատագրին վիճակուած ահա-
ւոր մարտիրոսութիւնը:

Մահը կեանքէն աւելի գերա-
զանց բարիք մըն է տառապող
հիւանդին համար եւ միաժամա-
նակ աստուածային օրհնութիւն մը,
որ կրնայ աչքերը փակելով ազա-
տագրուիլ անդիմադրելի ցաւերէն:

Ես կը հաւատամ, որ Քրիս-
տոս, ըստ մը բացակայ եղած չէ
բարեպաշտ մարդոց ամենօրեայ
կեանքէն: Ան մեզի հետ է իր
յարուցեալ փառքով, երբ կը ճա-
շենք, երբ կը քալենք, երբ կ'աղո-
թենք, երբ կը բարեգործենք, միշտ
միասին ու մեզմէ անբաժան: Ան կը
քալէ մեր առաջեւէն որպէս բարի
ու քաջ Հովիւ եւ Հովուապետ եւ
մենք կ'երթանք իր ետեւէն, միշտ
հաւատարիմ իր առաջնորդութեան,
ոգեւորուած իր ոսկեբերան պատ-
ուէրներէն:

Այս աղօթանուէր հաւատքով
տողորուած ճշմարիտ քրիստոնեա-
ներ, հոգ չեն, թէ Քրիստոս երկ-
րորդ անգամ պիտի գայ, կամ ոչ:

Մարդկային հասարակութիւնը
ներկայիս տարբեր կը մտածէ ու
տարբեր կը հաւատայ: Խաղաղու-

թիւն եւ սէր կ'ուզեն եւ Խաղաղա-
րարը կը ժխտեն, Փրկութիւն կ'ու-
զեն, բայց Փրկիչը չեն ուզեր:

Սատանայի դրամանիշին երկր-
պագու, սուտ քարոզիչները, ամէն
օր հեռուստատեսիլի կայաններէն
Հին կտակարանի հրէական աւան-
դութեան առասպելախառն պատ-
մութիւններով, միամիտ հաւատաց-
եալները կ'անջատեն հայ ազգին
մարմնէն եւ հայ եկեղեցւոյ ուղղա-
փառ հաւատքէն, չեն անդրադառ-
նար, որ ցեղասպանութիւն կը գոր-
ծեն հաւատացեալները խաբելով եւ
շահագործելով:

Երկու հազար տարիէ ի վեր
հայ եկեղեցւոյ դպրաց դասերը
ամէն Կիրակի, Տէր Ողորմեաներու
հոգեպարար երգեցողութեամբ սէր
եւ միութիւն կը հայցեն Տիեզերա-
կալէն:

Քսան դարեր անցած են քրիս-
տոնէութեան հիմնադրութենէն, այդ
սրտառուչ աղերաները դրական պա-
տասխան չեն լսած երկինքէն:

Երկու կաթողիկոսներ ունինք
ԸՆԴԴԻՍՏՆԻՐ, երկու Առաջնորդ-
ներ՝ Ընդդիմադիր, երկու թեմեր՝
ԸՆԴԴԻՍՏՆԻՐ, բազմահարիւր Կու-
սակցութիւններ եւ կազմակերպու-
թիւններ՝ հակամարտ հակումներով,
եզրակացութիւնը՝ անմիաբան հայ-
րենիք եւ անմիաբան ժողովուրդ:

Դարամերձ հասունութեան
հանգրուանին հասած, այս յօդուա-
ծը ստորագրող ծերունազարդ քա-
հանան ծունկի եկած կ'աղօթէ:

ՈՎ ԱՍՏՈՒԱԾ, ԴՈՒՆ ԱՅՍ
ԲԱԶՄԱԶԱՐՁԱՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ
ՍԷՐ ՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ ՇՆՈՐՀԷ,
ԲԱՅՅ ԿԸ ԽՆԴԻՐԵՄ ՔԵԶՄԷ, Սրտիս
ամբողջ եռանդով ՈՐ ԻՆՁՄԷ ՍԿՍԻՍ:

Աստուած՝ այս գեղատեսիլ բնու-
թիւնն է, այս շնչող նիւթական եւ
հոգեկան ՏԻԵԶԵՐՔԸ:

Աստուած՝ իմ ապաւէնս է, իմ
կեանքս, իմ Հայրս, իմ Փառքս:

Քրիստոս՝ սիրոյ եւ հաւատքի
յեղափոխութեամբ պարզեց հոգ-
ւոր գարթօնք Հայ ժողովուրդին եւ
իր կեանքին ու ճակատագրին նա-
խասահմանումը ուղղեց դէպի ԱՆ-
ՄԱՀՈՒԹԻՒՆ:

Քրիստոս՝ իմ Առաջնորդս է,
իմ հոգեւոր Ուսուցիչս, իմ ժողո-
վուրդիս Անգուղական Փրկիչը: Փառք
իր Յաւերժալոյս Յարութեան:

ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
Վ Ի Ծ Ա Կ Ա Յ Ա Ն Ո Ւ Թ Ի Ն

Ի նպաստ
Նոր Հաճնոյ Մեծն Մուրատ դպրոցին

Մեծ Պարգել՝ 2008 Lexus ES 350
Ա. Պարգել՝ Երկու Երթ ու Դարձ Տոնս Հայաստան
Բ. Պարգել՝ Laptop Համակարգիչ
Գ. Պարգել՝ 42" Plasma TV

Վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ
Կիրակի, Մարտ 16, 2008, Կ.Ե. ժամը 8:00ից
Verdugo Hills Country Club
400 West Glenoaks Blvd., Glendale, CA 91202

Նոր Հաճըն Քաղաքի 50-ամեակի տօնակատարութեան առիթով

Նուէր՝ \$100
Տոմսերը ստանալու համար հեռաձայնել՝
(626) 351-0695, (626) 577-7234, (818) 243-7029

ԱՅՑ՝ ԱՌ ՂԱՅՐԵՆԻՔ...

ՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆՆԱՆ

2007 թվականին մեկնեցի Հայրենիք: Գարուն էր, Մայիս ամիս, ծաղկել էին հայրենի դաշտերն, սար ու ձոր: Սէզ ու բոլորը մագլցում էին ժայռն ի վեր, եւ կարկաչող ջրերը հոսում էին ձորերն ի վար: Զարթոնք էր հայրենի երկրում: Այնտեղ էլ չկային չարակամ ուժեր: Քաղաքներում եւ գիւղերում վխտում էին դարաւոր հայ ազգի աղջիկ ու տղայ, եւ մի ժողովուրդ դարերից եկած ու ճակատը բաց, վայելում էին օրհնուած հացն ու ջուրը անկախացած հողի վրայ:



Ես հիւրն էի բուսաբանական քիմ. ինժինեթի Գաղիկ եւ Ռոզանա Ղարիբեանների: Գիշերեցինք:

Առաւօտեան մեզ ընդունեց Հայաստանի հանրապետութեան գրադարանի բարեհայեաց տնօրէն՝ Սիմոն Աղաջանեանը: Հարցերի եւ մտքերի փոխանակութեամբ ծանօթացանք յարգելի գրադարանի տնօրէնին: Իր մեծութեան չարգանքին արժանացանք: Նուիրեցի 30 օրինակ իմ բանաստեղծութեան գրքերից գրադարանին:

Յարգելի Սիմոն Աղաջանեանից ինդրեցի մեզ օգնել եւ ուղղութիւններ տալ Հայաստանի բոլոր քաղաքներում ուսուցիչի, (հատրնտիր) «ուէլա կլուբ»ի տնօրէն Ալեքսան Տէր Թադէոսեանի թարգմանութեամբ: Գրքերի վերնագրերն են՝ «առաջին գիրքս «Սրտի Մրմունջներ», «Նշենի», «Կուռնկ» բանաստեղծութիւններ:

Իսկ թարգմանուած ուսուցիչի «Սրտի ուշացած Մրմունջներ հատրնտիրը»:

Լաւ եւ ազնուահոգի մարդ էր գրադարանի տնօրէն Սիմոն Աղաջանեանը:

Նոյն ժամին զանգեց քաղաքների գրադարանների պատասխանատուներին եւ մեզ հերթագրեց:

Նախ Գիւմրի, Վանաձոր, եւ հերթականութեամբ ուրիշ քաղաքներ: Մեր պարտքը համարելով մեր խորին շնորհակալութիւնն յայտնեցինք յարգարժան Սիմոն Աղաջանեանին իր ցուցաբերած առաքելութեան համար:

Վաղ առաւօտեան ուղեկիցներին հետ մեկնեցինք դէպի Գիւմրի քաղաք: Օդը պայծառ էր, մաքուր:

Երեւանից դուրս դէպի Աշտարակ ասֆալտապատ եւ հարթ է տանող ճանապարհը: Երեւանի արուարձանը գտել էր իր պատմութեան ուղին: Վեր էին խոցացել

նորաշէն բնակավայրերը եւ 1970 թ. հոյակապ հիւանդանոցը, որն այն օրերն տնօրինում էր եղբայրս օրոլով վիրաբոյժ Տօքթ. Օհան Վարդանեանը: Ես էլ այդ թուականին 1970 թ. Օգոստոս ամսին Եւրոպայից անցել էի մայր Հայրենիք:

Վերջիշում եմ այն օրերը որ ինձ բերեց բժշկական վերնագրեստ եւ բժշկական լսողական գործիք: Վերբ բարձրացանք յարկերը եւ միասին այցելեցինք հիւանդներին:

Հիացած էի որ եղբայրս պաշտօնավարել եւ պատիւ է բերել թէ իր ընտանիքին եւ թէ հայրենիքին եւ ամբողջ սրտով իր ծառայութիւնն է մատուցել հայ ժողովրդին:

Ինձ այն երազանքից դուրս հանեց որ նա հեռացել է իր ընտանիքից: Նա հասել էր իր արմատին, հարազատ հող ու ջրին եւ պայեւական սուբ օճախին, որը ինձ համար մեծ պարծանք ու պատիւ էր:

Հիացած էի երբ թողեցի այդ սքանչելի մեծ բժշկին ու վերադարձայ «Տօթեյ Արմինիա» Երեւանում:

Վերջիշեցի այն օրերը ու իր հոյակապ շէնքի առջեւից անցանք դէպի Աշտարակայ քաղաքը: Հեռուից կանչում էր մեզ մառախլապատ Ալազեանը ձիւնազագաթ չորս սիւներով:

Ես նստել էի իր աւագանին կից ժայռաքարի վրայ ու գրել էի իմ առաջին բանաստեղծութիւնը «Կանչիւր Ալազեան» խորագրով: 1970 թ. Օգոստոս ամսին էր, որ իմ մէջ կարօտ մնաց մինչեւ 1997 թ.: Հայրենիքի անկախութեան օրերին, կրկին արժանացայ հայրենիքիս:

Եւ յետոյ ամէն տարի գնում եմ երգելու իր հայրենիքի գովքն ու երգանքներս նուիրելու: Գնում եմ հպարտ եւ ուրախ: Հասնում եմ

մեր պապերի հինաւուրց քաղաքին, որը կամուրջ է կապել Երեւանի եւ Գիւմրիի միջեւ, որում ընդգրկուած են Սասունցիների գիւղերը իրենց աւանդոյթներով եւ վայելում են Ալազեանի փէշերում իրենց կեանքը:

Շարժուեց մեր աւտոն դէպի Թալին, Թաւիշ, Մասիսարայի ծաղկազարդ շրջաններում:

Հէնց այդտեղ ծնւում է հայ բանն ու բառը եւ հոլովում Ս. Մեսրոպ Մաշտոցի սրբազան գերեզմանը, որը դարձել է հայութեան սրբավայրը: Ուրախութեան յուզումով անցնում ենք Մարալիկի շրջանը, իր տեսարժան սար ու ձորերով, բերրի հողերով, լցուած ծիւ ծաղիկներով: Ուրախութեան արցունքներ թոյլ չեն տալիս որ յագենամ այդ տեսարժան վայրերից:

Այդ տեղից ինձ կանչում էր Շիրակը, որտեղ գտնւում էր Ղուկասեան Նորաշէն քաղաքը, ու ես վայելում եմ իր զովասուն օդն ու ջուրը: Այնտեղից, Բաշ գիւղից, սկիզբ է առնում Դեբեդ գետը եւ թափուած է Աղաւեստ գետը, որը կտրելով Շիրակի մարզը հասնում է Լոռի եւ անցնում է Իջեւանի մարզ եւ միանում է Կուր գետին:

Վերջիշեցի, Ղուկասեանի Բաշ գիւղում այցելում էի իմ բարեկամներին: Այնտեղ գրեցի մի բանաստեղծութիւն 1997 թ. Օգոստոս ամսին «Ղուկասեան Քաղաքին» վերնագրով եւ ձօնեցի Կիրակոսեան եղբայրներին իմ «Նշենի» գրքում:

Լաւ յուշերով հասնում ենք Գիւմրի քաղաք: Գեղաշէն Գիւմրին վերաշինուել էր, քիչ հետք էր մնացել դժնդակ օրերից: Երկրա-

Շաբ-ը էջ 17



Wahib's
MIDDLE EAST RESTAURANT
الشرق مطعم
MEDITERRANEAN LEBANESE FOOD

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"



Wahib

CATERING FOR ALL OCCASION



MOUHAMAD SALEM
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

FAMILY ENTERTAINMENT
BANQUET HALL
EVERY
FRIDAY ~ & ~ SATURDAY
NIGHT
INTERNATIONAL ~ ARABIC
CALL FOR RESERVATION



BELLY~DANCING

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

ՈՂՋՈՒՆԱՎԱՆԴԵՍ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԲԱՆԱՍՏԵՐԾ ԺԱԳ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Եարտըմեանի, Չորեքշաբթի, Նոյեմբեր 21ին, 2007 երեկոյան ժամը 7:00ին Առաջնորդարանի Գալայճեան Սրահին մէջ տեղի ունեցաւ Ողջունահանդէս՝ նուիրուած Բանաստեղծ Ժագ Յակոբեանի:

Բացման խօսքը կատարեց հանդիսավար Տիար Բարսեղ Գարթալեան, որ կարդաց նաեւ բանաստեղծին կենսագրականը:

«Ժ. Յակոբեան Բանաստեղծը եւ անոր պատգամը» նիւթին շուրջ խօսեցաւ Սարգիս Վահագն: Մենք զինքն կատարեց Մաննիկ Մանուկեան, դաշնամուրի մասնակցութեամբ Փրոֆ. Լեոն Աբրահամեանի - «Հայ Եկեղեցին» խօսք Ժ. Յակոբեանի, երաժշտութիւն Աննիկ Զինտարզեանի, «Մեսրոպ Մաշտոցին» խօսք Խաչիկ Դաշտենցի, երաժշտութիւն Զարեհ Եպս. Ազնաւորեանի, «Ալէլուիա» խօսք

Ժագ Յակոբեանի, երաժշտութիւն Զարեհ Եպս. Ազնաւորեանի: Իսկ ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Փրոֆ. Օշին Քէշիշեան:

Բանաստեղծին գրած «Հայր, Հայրէն սորվեցուր» եւ «Օտար շեմին» քերթուածները կարդաց Բր. Վահէ Սրկ. Աբովեան: Ողջոյնի խօսք կատարեց Մասիս Արարատեան: Իսկ իր փակման խօսքին մէջ Առաջնորդ Սրբազան Հայրը անդրադարձաւ Ժագ Յակոբեան մարդուն եւ բանաստեղծին եւ իր ա՛յլ առաքինութիւններու մասին եւ գնահատեց իր երկրատես դաստիարակչական գործունէութիւնները եւ բանաստեղծի բեղուն վաստակը:

Մեծարեալ բանաստեղծը իր երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր ի պատիւ իրեն նուիրուած ողջունահանդէսին՝ եւ Հայր Տաճատին, որ կազմակերպչական աշխատանքը եւ յայտագրի պատրաստութիւնը սիրով յանձն առած էր: Սրբազան Հօր օրհնութեան աղօթքով փակուեցաւ գնահատական երեկոն, որուն յաջորդեց հիւրասիրութիւնը:

ՐԱՅՑ. ԵԿԵՂԵՑՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ 58ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ՊՍԱԿՈՒԵՑԱԻ

Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Երիտասարդաց Կազմակերպութեան 58րդ Տարեկան Համագումարը տեղի ունեցաւ Նոյեմբեր 23ին եւ 24ին, 2007 հիւրընկալութեամբ Եղեմի Սուրբ Աստուածածին Հայց. Եկեղեցւոյ: Համագումարին Ատենապետն էր Կեղորոնական Խորհուրդի Ատենապետ՝ Գարինա Գարագաշեան: Համագումարին բացումը աղօթքով կատարեց Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան:

Ատենապետուհին հրաւիրեց երեք ղեկավարներ՝ Մայքըլ Հօլիսը, Թամարա Գարագաշեանը եւ Բր. Մէթիո Սրկ. Աշը, որպէսզի ծրագրը ներկայացնեն պատգամաւորներուն Հեծկ կրտսեր մասնաճիւղը վերակազմակերպելու կապակցութեամբ 12-17 տարիք ունեցողներուն համար: Իսկ երէց մասնաճիւղը՝ 17-30 տարիք ունեցողները պիտի գործեն Կեղորոնական Խորհուրդի պատասխանատուութեամբ:

Հեծկ վերակազմակերպչական ծրագրի մասին Սրբազան Հայրը իր խօսքին մէջ ըսաւ. «Այս կարեւոր քայլը առնուած է ի նպաստ մեր սիրելի երիտասարդութեան, որպէսզի անոնք կարենան մեծնալ եկեղեցւոյ մէջ եւ ապագային գլխաւոր ղեկավարները դառնան մեր համայնքներուն»:

Օրուան օրակարգի աւարտին, Եկեղեցւոյ Սրահին մէջ տեղի ունեցաւ պարահանդէս: Իսկ պանդոկին մէջ ծնողները ունեցան իրենց ընթրիքը:

Համագումարը վերսկսաւ Շաբաթ, Նոյեմբեր 24ին: Ներկայ գտնուող Հոգեւոր Հովիւները իրենց բարեմաղթութիւնները կատարեցին: Անոնք իրենց պատգամը տուին եւ խօսեցան ժամանակակից հարցերու շուրջ: Ապա Առաջնորդ Սրբազան Հայրը իր գնահատական եւ քաջալերական պատգամը տուաւ պատգամաւորներուն: Իր խօսքին

մէջ կոչ ուղղեց երիտասարդութեան լսելու Աստուծոյ կոչը իրենց կեանքի ընթացքին, գործածելու Աստուածատուր իրենց պարզեւնները եկեղեցւոյ եւ համայնքի օգտին համար եւ միասնաբար աճելու ու մեծնալու որպէս մէկ մարմին՝ Քրիստոսի օրհնութեամբ: Իր խորին երախտագիտութիւնը յայտնեց Մուրի Հոգեւոր Հովիւ՝ Արթ. Տ. Վարդան Աւար Քհնյ. Գասպարեանին եւ 58րդ Համագումարը կազմակերպող յանձնախումբին, ինչպէս նաեւ Կեղորոնական Խորհուրդին՝ իրենց նուիրումին եւ յատկապէս Ատենապետուհի Գարինա Գարագաշեանին իր չորս տարուան անձնուէր ծառայութիւններուն համար:

Ուշադրութեամբ լսուեցաւ «Հայ Եկեղեցասէր Երիտասարդաց Առաքելութիւն Դէպի Հայաստան» ծրագրի մասին եւ քաջալերուցան երիտասարդները մասնակցելու 2008 թուի Հայաստան մեկնման: Յաջորդ կարեւոր նիւթն էր Հեծկ Տարեկան Հոգեւոր Դաստիարակութեան Ուսումնական Ծրագիր-Ուղեցոյցը Սուրբ Գիւրգէն քաղուած հատուածներու, Տէրունական եւ Սուրբերու Տօներու եւ արթններու «Հաւատով Խոստովանիմ» էն:

Չանագան յանձնախումբերու եւ Կեղորոնական Խորհուրդի ընտրութիւնները կատարուեցան 2007-2008 տարեշրջանի համար:

Հեծկ Կեղորոնական Խորհուրդի նոր կազմն է. Սօսի Եաքովիտէս՝ Ատենապետ, Ալէքս Կիրակոսեան՝ Փոխ Ատենապետ, Առէթ Արամեան՝ Գանձապահ, Լուիսա Օճաքեան՝ Ատենադպրուհի, Անի Խաչատուրեան՝ Թղթակցութեանց Քարտուղարուհի, Մաքրինա Այվազեան՝ Ծանուցումներու Վարիչ, Գարին Ճէմճէմ՝ Խորհրդական:

Ճաշէն ետք ժողովը շարունակուեցաւ համատեղ աշխատանքային ձեւով: Որոշուեցաւ 2008ին Ամառնային Ճամբարը ունենալ չորս շաբաթներով:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ՝ «ՄՈՒԱՅՈՒԱԾ» ԳՈՒՄԱՐՆԵՐ

ԿԱՌԼԷՆ ԵՓՐԵՄԵԱՆ

ԱՄՆ-ի օրէնքները հաստատում են որ բնակչութեան կողմից մոռացուած եւ չպահանջուած գումարային միջոցները, բանկային ներդրումներ, կորցրած չէքեր կամ թանկարժէք թղթեր, տրուած են պետութեանը ցպահանջ: Գումարի չափը նշանակութիւն չունի: Պետութիւնը պահպանում է մոռացուած տնտեսումները ակտիւների ձեւով, պարտաւորուելով պահպանել նրանք նաեւ արժեզրկումից (ինֆլացիա): Շատ մեծ թուով մարդիկ չեն էլ ենթադրում, որ իրենց են սպասում յատուկ ֆոնդում պահպանուող գումարները» կիսուեց ֆինանսա-կոնսալթուինք կորպորացիայի (KPMG) աւագ մենեճր Իվարսուն Էլլիստը:

Երբեմն ցպահանջը իրականում է տասնեակ տարիներ յետոյ: Զպահանջուած սեփականութեան ֆոնդը կոչուած է «Unclaimed Property Fund, UPF»: ԶԼՄները տեղեկացնում են որ միայն Նիւ Եորքում իրենց տէրերին սպասող մոռացուած գումարները գերազանցում են \$7.5 միլիարդ: Վերջերս մէկ անձնաւորութիւն իր տատիկի կողմից գնած պարտոմսի դիմաց ներկայումս 60 տարի յետոյ ստացաւ \$20 հազար: Վերջին տարիները ԱՄՆի տարբեր նահանգների բնակիչները ցպահանջ ֆոնդից ստացել են իրենց «մոռացուած» գումարները: Ընդ որում \$5-7 միլիոն գումարը չի համարուում եզակի դէպք: Այս ֆոնդում կուտակուել են բանկային հաշիւների մնացորդները, չպահանջուած ապահովական վճարումները, երբեմն գնուած արժէթղթեր եւ մինչեւ անգամ մոռացուած ռոճիկավճարներ: Մոռացուած միլիարդների կացութիւնից արագ փորձում են օգտուել որոշ ֆինանսական կոմպանիաներ, որոնք առաջարկում են իրենց ծառայութիւնները մոռացուած գումարների վերադարձի պարտքապայքարում: Տեղեկանալով, որ ձեր գումարը մօտ է \$2 միլիոնի, չի բացառուում, որ հատուցման համար նրանք համեստօրէն յայտնեն որ կարող են բաւարարուել \$200 հազարով: Երեւի պահանջը կարելի է համարել ընդունելի: Ստուգելու համար ունէք արդեօք կամ ձեր բարեկամները որեւէ մոռացուած գումար պէտք է մտնէք ինտերնետ՝ www.osc.state.ny.us/ouf կամ www.missingmoney.com, նշելով հասցէն դուք կը ստանաք լիարժէք պատասխան: Կամ կարող էք գրաւոր հարց ներկայացնել office of the state comptroller c/o Office of Unclaimed Funds, 110 State Street, Albany, New York, 12236:

- Եւ վերջում մի քանի պարզաբանումներ:
 1. Ինչպէ՞ս է պատահում որ ապահովական կոմպանիայի կամ բանկի ձեզ հասանելիք գումարները յայտնուել սեփականութեան ցպահանջ ֆոնդում:
 - Հիմնականում դա պատարում է որ հասցէն փոխելիս դուք մոռացել էք տեղեկ պահել համապատասխան ծառայութիւնները: Զեզ հասանելիք գումարը կախուած է օրի մէջ եւ ի վերջոյ ուղարկուած է UPF:
 2. Ինչպէս դուք կարող էք վերադարձնել ձեզ հասանելիք գումարները:
 - Պէտք է լրացնէք յատուկ ձեւ, որը տեղադրուած է նշուած սայտում: Միաժամանակ դուք պէտք է կարողանաք հաստատել որ իրօք ապրել էք սայտում նշուած հասցէով, եւ այսպէս յարգելի ընթերցող հայրենակից եթէ այս հրապարակում դրդապատճառ կարող է հանդիսանալ, աջակցելով ձեզ յայտնաբերել որ մեծ գումարի ժառանգորք էք, ուրեմն կարելի է համարել այն ազգասէր քայլ եւ անակնկալ նոր տարուայ նուէր:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax :-----

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶԱՊԱՐԵԱՆ

Շաբաթական 13-էն

ներէ ետք Տեղապահ, միաբանութեան Զարեհ Փայասլեան, Խորէն Բարոյեան եւ Ղեւոնդ Չէպէյեան եպիսկոպոսներու ճնշումին տակ հարկ զգաց հրաժարիլ իր պաշտօնէն որմէ ետք միաբանական ժողով գումարել հարկ եղաւ նոր Տեղապահ ընտրութեան համար: Ժողովը գումարուեցաւ 1955 թուի Հոկտեմբերին ու Տեղապահ ընտրուեցաւ Խորէն Եպս. Բարոյեան, որուն վճռական ընթացքը մի քանի ամիսներ ետք ինդրա-յարոյց, միակողմանի ու անհաճոյ պայմաններու մէջ յաջողոց Զարեհ Կաթողիկոսի ընտրութիւնը, որ անընդունելի եղաւ Մայր Աթոռի կողմէ՝ տուեալ ոչ-խաղաղարար պարագաներու բերումով:

Խաղ Արքեպիսկոպոս որպէս կանոնի ու կարգի հոգեւորական որոշեց իր դիրքը՝ մնալ Մայր Աթոռի կողքին, իր հետ ունենալով միաբանութեան մեծամասնութիւնը՝ տասը միաբաններ, որոնց մէջ կը գտնուէին երեք եպիսկոպոսներ: Ան մերձաւոր անցեալին ձեռնհասօրէն գործակցած էր Կիլիկիոյ Աթոռին կարկառուն Հայրապետներուն՝ Սահակի, Բաբգէնի, Պետրոսի եւ Գարեգինի, որոնք միշտ յարգել էին Մայր Աթոռի գերագահութիւնը: Իբրեւ Աջապահեան, տառաջիօրէն Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջը եւ միւս մասունքներու արծաթեայ արկղը անձամբ կը պահէր իր աւանձնասէնեակին մէջ, ապահով, մինչեւ այն օրերուն երբ կը կատարուէր 1956 թուի կաթողիկոսական ընտրութիւնը: Նոյն թուի Մարտ ամսուն Խաղ Արքեպիսկոպոսը, որուն մասնակցելու, աչլայլած Անթիլիաս կը վերադառնար իմասնալով որ իր սենեակէն կը բացակայէր մասունքներու եւ Աջին արկղը: Անձանօթներ «գերի» տարած էին գայն ու լման տարի մը վրդովումի մասնած Անթիլիասի իշխանութիւններն ու մանաւանդ Խաղ Արքեպիսկոպոսը, որուն ձեռքով այդ մասունքները 1915 թուի տարագրութեան ընթացքին Սիսի Հայկաբերուած էին տաժանակիր ճամբորդութենէ մը ետք: 1957-ի Մարտին Մասունքները ապահով վերադարձուեցան Աթոռ:

Ի պաշտօնէ Խաղ Արքեպիսկոպոս չորս անգամներ Մայր Աթոռէն հրաւեր տանալով գացած էր որպէս նախանդամ Ազգային-Եկեղեցական ժողովներու: Նախ 1941-ին եւ ապա 1954-ին: Իսկ յետոյ՝ 1958-ին, վազգէն Ա Կաթողիկոսի ծննդան յիսամեակին առիթով, երբ առիթը ունեցաւ Հայրապետի տնօրինութեամբ Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ վարդապետական չորս աստիճանները շնորհելու իրեն և նախկին Կարպիսեանի, Զաւեն Արզումանեանի, եւ Գիւտ Նազազեանի, որոնք քահանայական կարգ ստացել էին իր տեղապահութեան շրջանին, եւ որոնց վազգէն վեհապառ յատուկ կոնդակներով վարդապետական ակադեմիան լանջախաչ կրելու իրաւունք շնորհեց: Աջապահեան վերջին անգամ մըն ալ Մայր Աթոռ հրաւիրուեցաւ որպէս նախանդամ մասնակցելու համար 1962-ի Ազգային-Եկեղեցական ժողովին, Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ներկայացնելով, քանի որ Անթիլիաս ընթացք չէր տուած իրեն ուղղուած հրաւերին:

Մայր Աթոռի գահակալը վազգէն Ա Հայրապետ իր հանդիպումներու ընթացքին մեծ յարգանք կ'ընծայէր Խաղ Արքեպիսկոպոսին, գինք նկատելով «Չեք մ պաշտպաններից մէկը Մայր Աթոռի հայրապետութեան հեղինակութեան, հայ եկեղեցու միութեան եւ անբաժանելիութեան սկզբունքին»: Մայր Աթոռի աչքին Աջապահեան «տիպար, աւանդապահ, օրինակելի հոգեւորական մը» կը հանդիսանար: Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս իր Մարտ 22, 1962 թուակիր նամակով կը գրէր. «Կը գնահատենք Ձեր ուղիղ կեցուածքը եւ գործունէութիւնը, եւ դուք պիտի յիշուիք որպէս պայծառ օրինակ մը բարձրաստիճան հոգեւորականի, որ գիտցաք բարձր պահել պատիւը Կիլիկեան Աթոռին, հաւատարիմ մնալով այդ Աթոռի լաւագոյն աւանդութիւններուն»:

Աջապահեան Սրբազանի հաւատարիմ միաբանները միշտ իր կողքին մնացին, թէեւ կարճ ատեն մը միայն, մինչեւ որ բոլորն ալ հովուական պաշտօններու կոչուելով հետզհետէ ցրուեցան, միշտ գիտութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Երբ 1963 թուականի Երուսաղէմի ողջագուրումը կատարուեցաւ վազգէն եւ Խորէն Կաթողիկոսներու միջեւ, ու վերջինս ճանաչում ստացաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Խաղ Արքեպիսկոպոս իմաստութիւնը ունեցաւ «իր տունը» վերադառնալու, ընկերակցութեամբ Լիբանանի թեմի Առաջնորդ Տաճատ Արք. Ուրֆալեանի, ուր սիրով ընդունուեցաւ Խորէն Կաթողիկոսին ու միաբանութեան ուխտէն: Հոն իսրայէլ կեանք մը վարելէ ետք, ի Տէր հանգեաւ Խաղ Արքեպիսկոպոս Լիբանանի Հայոց Ազգային Բուժարանին մէջ 1968 Յուլիս 17-ին, եւ թաղուեցաւ Անթիլիասի Կաթողիկոսարանի Զարեհեան Հայրապետաց Դամբարանին մէջ:

ԱՅՅ՝ ԱՌ ԸԱՅՐԵՆԻՔ...

Շաբաթական 15-էն

չարժը խլեց մեզանից 9 ուիսըր ուժով հարիւր հազար ժողովուրդ: Այդ օրերին եղբայրս բժիշկ Օհան Վարդանեանը բնակուած էր Շվեդիայում: Իր հետ տարել էր 30 հոգանոց բժիշկ եւ բուժօրհաններ, վրաններ, հիւանդանոց (դաշտային) եւ վիրաբուժական գործիքներ եւ դեղորայք:

Մէկ ամիս իր կազմի հետ մնացել էր Գիւմրիում, Սպիտակում եւ Վանաձորում: Մտքերով տարուած ուշքի եմ գալիս: Աւտոն կանգել է Գիւմրիի հանրապետութեան գրադարանի առջեւ:

Իջնում ենք եւ մեզ դիմաւորում են գրադարանի տնօրէնը եւ իր գործակիցները: Մեզ ընդառաջում են մի սենեակ:

Մանօթանում ենք վարպետի ծննդավայրի, տնօրէնի եւ գիտնականների հետ: Մի մէջբերում:

Յարգելի տնօրէնը երբ գործով անցնում է Շվեդիա հիւանդանում է: Իրեն տանում են եղբօրս բժիշկ Օհան Վարդանեանի կլինիկան, բուժում ու ծանօթանում է բժշկի հետ ու նկարում է: Ինձ ցոյց տուեց նկարը յարգելի գրադարանի տնօրէնը:

Այդ միջոցին ինձ մօտեցաւ գրադարանի գիտնականներից մէկը ու ասաց, մենք կարդացինք ձեր նուիրած գրքերը եւ շնորհաւորում ենք ձեր գրչի արգասիքները, յատկապէս իմաստութիւնների բաժնում, որ գրաւել է ընթերցողների հաւանութիւնը: Հարազատ վերաբերմունք ցուցաբերեց այդ մեծ գիտնականը:

Գիւմրիում մեր ծրագիրը չետաձգուեց մի ուրիշ առիթով, քանի որ գրադարանի ընդհանուր աշխատողները արձակուրդի մէջ էին: Թեթեւ հիւրասիրութիւնից չետոյ հրաժեշտ տուինք գիտնականներին եւ աշխատողներին: Այստեղ հերթագրուեցինք միւս հանդիպումների համար:

Մեր ինքնաշարժը հանգիստ շարժուեց դէպի Վանաձոր: Գիւմրիին պատմում է մեզ վարպետի եւ Շիրազի «Այ կուլափ ջուր» եւ վարպետի «Աբուլալա Մահարի» եւ «Շուշանիկի սիրոյ մասին»:

Համուտ ենք Վանաձոր եւ հանդիպում ենք վաստակաշատ եղբայր Կիրակոսեանին, հանրային գրադարանի տնօրէնին: Հանրային գրադարանում ծանօթացանք ընդհանուր կազմին, խոնարհութեամբ

իմ յարգանքի տուրքը մատուցեցի ունկնդիրներին, որոնք ժամերով սպասում էին իմ պատմական ելոյթին:

Նախ կարդացի իմ եռահատոր գրքերից: «Սրտի Մըմունջներ», «Նշենի» եւ «Կուռնկ» հատորներից 30 րոպէ եւ արժանացաւ բուռն ծափահարութեան: Այստեղ նկարագրեցի եւ պատկերեց իմ մէջ իմ հայրենի քոյր եւ եղբայրների սէրն ու գեղեցկութիւնը, քաջութիւնն ու իրենց խիզախ հոգին: Յուզուեցի, արտասուեցի եւ արցունքներս մէջ տեսայ մի հին ժողովուրդ, հօր եւ ամբակուռ, որ ոչ մի գարկից չի վախեցել:

1918 թ. Վանաձորում քեցիքն ոտխիւն դէպի Բաշ-Ապարան, դէպի Գիւմրի, դէպի Սարդարապատ, կոտորեցին եւ հայոց երկրից դուրս շարտեցին 1915 թ. երեք միլիոն հայ ժողովուրդի արնախում թշնամուն:

Այս պահն ինձ ոգեւորեց: Կարդացի «Շրջագայէլ» իմ բանաստեղծութիւնը:

ՇՐՋԱԳԱՅԵԼ
Երեւանից դուրս դէպի Աշտարակ,
Մայր ուղիմ էր մեզ սպասում,
Ու Արագածի կանթեղի մօտ,
Թաւափօթ լանջն է կանչում:

Եւ այնտեղից կանչում է մեզ,
Մեր հնամեայ Ապարանը,
Բարձունքներից տեսնում ենք մենք

Գաղթուածների ճակատը վեհ...
Արագածոտնի մեղմիկ քամին,
Տարածում է ծով դաշտերում,
Այնտեղից ցորենի բոյրն էր բուրում,

Իմ հայրենի վառ դաշտերից,
Ասես այնտեղ լուռ ու շուճն էր մեզ
Յրապուրում իր անցեալով,
Թումանեանի տունն էր կանչում
Դսեղ գիւղի բարձունքներից
Վանաձորի ճակատներում,
Քաջ կոռուցիք յաղթանակով,
Դեռ կը կոռուցնք զճգի ուժով
Չենք խոնարհուի ոտխիւն...

... Սրահը թնդաց տեղատարափ ծափով, ողջոյններով: Հինգ հարիւր հոգի գոռում էին, կեցցէներով ու ծաղիկներով ողջունում: Այդտեղ էր թնդում իմ հայրենակարօտ ոգին, յուզումով ուրախանում եմ եւ զգաստանում, որ կանգնած եմ իմ հայրենի հողի վրայ, հարազատ իմ անլուելի ունկնդիրների առջեւ:

ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹ

Փաստինայի մէջ փոքր խանութ մը վարձու է Washington պողոտայի վրայ: Հասցէն է՝ 1527 Washington Blvd. Pasadena: Մանրամասնութիւններու համար հեռաձայնել Աւոյին՝ (626) 794-5318 թիւին:

ՎԱՐՁՈՒ ԲՆԱԿԱՐԱՆ

Փաստինայի մէջ վարձու է շարկաբաժին մը երկրորդ շարկի վրայ: Ունի երկու ննջարան, հիւրանոց, մէկ ու կէս բաղնիք, անձնակառ պատշգամ, կեղրոնական A/C եւ երկու ինքնաշարժի կանգառ: Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել՝ (626) 797-8623:

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ քնարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քարուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիթիթի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:



Merrill Lynch
INVESTMENT BANKING
JACK KALANJIAN
Professional Financial Advisor

Corporate Center Pasadena
225 So. Lake Avenue
Pasadena, CA 91101
(626) 396-2825 Direct
(626) 376-4665 Fax
jack_kalanjian@ml.com

“Helping the Armenian Community Build Wealth”

ՄԱՐՁԱԿԱՆ

ԵՒՐՕ - 2008

ՀԱՅԱՍՏԱՆ - ՂԱԶԱԽՍՏԱՆ 0-1

Ֆուտպոլի Հայաստանի հաւաքականը «Եւրօ-2008»-ի ընտրական փուլի վերջին խաղում 0:1 հաշուով զիջեց Ղազախստանի հաւաքականին: Այս պարտութիւնից յետոյ հայ ֆուտպոլիստները ընտրական Ա. խմբում գրաւեցին ընդամենը 7-րդ հորիզոնականը՝ իրենցից առաջ թողնելով նաեւ Ղազախստանին:

«Հանրապետական» մարզադաշտում կայացած հանդիպումից առաջ ֆաւորիտ էր համարուում Հայաստանը, որը սեփական յարկի տակ բաւական վստահ է հանդէս գալիս: Սակայն, հանդիպումը ցոյց տուեց, որ Հայաստանի հաւաքականը ամենեւին էլ ուժեղ չէր մրցակցից, որը մինչ այս հիւրընկալուելիս յաղթանակ չէր տօնել:

Խաղասկզբում առաւելութիւն ունէին հայ ֆուտպոլիստները, որոնք փորձում էին արագ գոլ խփել, սակայն ինչպէս միշտ կաղում էր մեր թիմի յարձակման գիծը, որը այս խաղում այդպէս էլ ոչնչով աչքի չընկաւ: Ձէին փայլում նաեւ դազախները, սակայն 64-րդ րոպէին Օստապենկոն, ձախ եզրում օգտուելով Հայաստանի հաւաքականի պաշտպանների անյաջող խաղից, մէն-մենակ յայտնուեց Ռոման Բերեզովսկու դէմ եւ հանգիստ գրաւեց դարպասը: Ընդունած գոլից յետոյ Հայաստանի ընտրանին մեծ ուժերով նետուեց առաջ խաղը փրկելու համար, որի արդիւնքում պաշտպանութիւնում նոր ճեղքեր առաջացան, որոնցից կարող էր օգտուել մրցակիցը: Հանդիպումը աւարտուեց 0:1 հաշուով:

Ա. Խմբակի դասաւորումը	
Լեհաստան	14 8 4 2 24-12 28
Փորթուկալ	14 7 6 1 24-10 27
Սերպիա	14 6 6 2 22-11 24
Ֆինլանտա	14 6 6 2 13-7 24

«Եւրօ-2008»-ի ընտրական փուլի աւարտին հետեւեալ հաւաքականները նուաճեցին եզրափակիչ մրցաշարի մասնակցելու իրաւունքը:

Լեհաստան եւ Փորթուկալ (Ա. խմբակ), Իտալիա եւ Ֆրանսա (Բ. խմբակ), Յունաստան եւ Թուրքիա (Գ. խմբակ), Չեխիա եւ Գերմանիա (Դ. խմբակ), Խրովազիա եւ Ռուսաստան (Ե. խմբակ), Սլոուակիա եւ Շուէտ (Զ. խմբակ), Ռումինիա եւ Հոլանտա (Է. խմբակ), Զուիցերիա եւ Աւստրիա (Հիւրընկալներ)

ՄԵՐ ԳԵՂԱՍԱՋՈՐԴՆԵՐԸ ՎԵՑԵՐՈՐԴՆ ԷԻՆ

Անաստասիա Գրեբեռնկինա-Վազգէն Ազրոյեան պարային զոյգը մասնակցեց Մոսկուայում անցկացուած գեղասահքի աշխարհի գաւաթի խաղարկութեան հերթական փուլի խաղարկութեանը: Պարտադիր ծրագրի կատարման ժամանակ մեր զոյգը վաստակեց 30,04 միաւոր եւ 10 զոյգերի մրցավէճում գրաւեց 4-րդ տեղը: Օրիգինալ պարի կատարման ժամանակ մեր գեղասահորդների ելույթը գնահատուեց 49,33 միաւորով: Մրցումների վերջին օրը նրանք վաստակեցին 81,35 միաւոր: Ընդհանուր հաշուարկով մեր գեղասահորդները 160,72 միաւորով գրաւեցին 6-րդ տեղը:



ՇԱԽՄԱՏԻ ԱՇԽԱՐԻ ԳԱՒԱԿԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Հայաստանի ուժեղագույն շախմատիստներ Լեւոն Արոնեանը եւ Վլադիմիր Յակոբեանը յաջողութեամբ յաղթահարեցին Ռուսաստանում ընթացող աշխարհի գաւաթի խաղարկութեան 1/32-րդ եզրափակիչի արգելքը եւ դուրս եկան յաջորդ փուլ: Լեւոն Արոնյանը 1-ին փուլում 2:0 հաշուով առաւելութեան հասաւ արգենտինացի Խուան Պաբլօ Հոբաչկայի նկատմամբ եւ 1/32-րդ եզրափակիչում մրցելով գերմանացի Յան Գուստաֆսոնի հետ պարտութեան մատնելով մրցակցին նուաճեց իր տեղը 1/16-րդ եզրափակիչում:



Վարկանիշով 2-րդ հայ շախմատիստ Վլադիմիր Յակոբեանը 1-ին փուլում չկարողացաւ յաղթահարել Անտոն Ֆիլիպովի արգելքը: Գրանցուեց ոչ-ոքի՝ 1:1: 1/32-րդ եզրափակիչ փուլում Յակոբեանը պարտութեան մատնեց իրանցի էշան Մազհամիրին եւ իրաւունք ստացաւ շարունակելու մրցապայքարը:

ԱՄՆ-ի դրոշի ներքոյ հանդէս եկող վարուժան Յակոբեանը եւս պայքարը շարունակում է լրացուցիչ պարտիաներում:

Շախմատի աշխարհի մինչեւ 20 տարեկանների առաջնութեան 7-րդ տուրը այնքան էլ յաջող չէր հայ շախմատիստների համար: Մեդալների համար պայքարող Աւետիք Գրիգորեանը, Հրանտ Մելքոնեանը եւ Արման Փաշիկեանը բաւարարուեցին միայն կէսական միաւորով: Այժմ լաւագույն արդիւնքը ունի Աւետիքեանը, որը 5 միաւորով ընթանում է 7-րդ հորիզոնականում:

Փաշիկեանը եւ Մելքոնեանը 4,5-ական միաւորով ընթանում են 12-17-րդ տեղերում: Հայաստանի միւս ներկայացուցիչները աւելի համեստ արդիւնքներ ունեն:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

ԱՆԳՆՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆուբպոլի առաջնութեան 14-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Էվըրթըն - Սանտորլիւնտ	7-1	Մանչեսթըր Ս. - Ռիտինկ	2-1
Նիւքտալ - Լիվըրպոլ	0-3	Պոլթըն - Մանչեսթըր Եուն.	1-0
Ֆուլհամ - Պլէքպըրն	2-2	Միտլըզպորո - Ասթոն Վիլլա	0-3
Արսենալ - Ռիվինգ	2-0	Ուէսթ Յամ - Թոթեմհամ	1-1
Տերալի Բաունթի - Չելսի	0-2	Պրըմիերլիգ - Փորթսմութ	0-2

Առաջատար խումբերու դասաւորումը						
Արսենալ	13	10	3	0	29-10	33
Մանչեսթըր Եուն.	14	9	3	2	23-7	30
Մանչեսթըր Սիթի	14	9	2	3	18-14	29
Չելսի	14	8	4	2	21-9	28
Լիվըրպոլ	13	7	6	0	22-6	27
Ասթոն Վիլլա	14	8	3	3	25-14	27
Փորթսմութ	14	7	5	2	25-13	26

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆուբպոլի առաջնութեան 14-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Քարլսրուհէ - Բերթա Պերլին	2-1	Յամպուրկ - Ռոսթոք	2-0
Այն. Ֆրանքֆորթ - Շթութկարթ	1-4	Քոթայիւս - Վարտըր Պոլդնը	0-2
Պ. Միլնիխ - Վոլսպուրկ	2-1	Պ. Լիվըրքուզըն - Տուիզպուրկ	4-1
ՎՖԼ Պոխում - Արմ. Պիլըֆելտ	3-0	Յանովըր-96 - Շալքէ-04	2-3
Նիւրնպըրկ - Տորթսմութ	2-0		

Առաջատար խումբերու դասաւորումը						
Պայերն Միլնիխ	14	9	4	1	30-8	31
Վարտըր Պոլդնը	14	9	3	2	32-17	30
Յամպուրկ	14	9	3	2	22-10	30
Քարլսրուհէ	14	8	2	4	16-16	26
Պ. Լիվըրքուզըն	14	7	3	4	24-11	24
Շալքէ-04	14	5	7	2	21-14	22
Շթութկարթ	14	7	1	6	20-20	22

ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆուբպոլի առաջնութեան 14-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Լացիօ - Փարմա	1-0	Ուտինգէ - Սինցա	2-0
Եուվենթուս - Փալերմօ	5-0	Ռեճինա - Ֆիորենթինա	0-0
Լիվորնօ - Սամտորիա	3-1	Ինթեր Միլան - Աթալանթա	2-1
Եմպոլի - Թորինօ	0-0	Քալիարի - Ա. Սէ. Միլան	1-2
Նափոլի - Քաթանիա	2-0	Ճենուվա - Ա. Էս. Ռոմա	0-1

Առաջատար խումբերու դասաւորումը						
Ինթեր Միլան	12	8	4	0	24-8	28
Եուվենթուս	13	7	4	2	29-13	25
Ա. Էս. Ռոմա	12	7	4	1	26-16	25
Ուտինգէ	13	7	4	2	16-13	25
Ֆիորենթինա	13	6	6	1	19-9	24
Նափոլի	13	5	3	5	21-15	18
Աթալանթա	12	4	6	2	16-15	18

ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆուբպոլի առաջնութեան 13-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Օսասունա - Էսփանիոլ	1-2	Լեվանթ - Ռէալ Պաթիս	4-3
Աթլէթ. Պիլայաս - Տեխ. Քորունա	2-2	Աթլէթ. Մատրիտ - Ռէալ Վալյատիլիս	4-3
Պարսելունա - Յուլվա	3-0	Ռէալ Մուրսիա - Ռէալ Մատրիտ	0-0
Ռասիլ - Վալենսիա	1-0	Սելիլլա - Մայորքա	4-3
Վիզարալ - Ալմերիա	1-1	Սարալոսա - Կեթաֆէ	1-1

Առաջատար խումբերու դասաւորումը						
Ռէալ Մատրիտ	13	9	2	2	30-13	29
Վիզարալ	13	9	1	3	26-19	28
Պարսելունա	13	8	3	2	26-10	27
Էսփանիոլ	13	7	4	2	19-14	25
Աթլէթ. Մատրիտ	13	7	3	3	27-17	24
Վալենսիա	13	8	0	5	20-20	24
Ռասիլ	13	6	5	2	11-9	23

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆուբպոլի առաջնութեան 15-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Նանսի - Լիլլ	2-0	Րընէ - Լիոն	0-2
Սէնթ Էթիէն - Սոչօ	1-0	Թուլուզ - Մոնպօ	0-0
Լանս - Լորիան	1-1	Քան - Պորտօ	5-0
Նիս - Փարիզ Սէն ժերմէն	2-1	Օքսէր - Լը Մանս	3-0
Սթրասպուրկ - Վալանսիէ	0-0	Սարսէլլ - Սէթց	3-1

Առաջատար խումբերու դասաւորումը						
Լիոն	14	11	1	2	31-12	34
Նանսի	13	9	3	1	22-7	30
Րընէ	14	7	3	4	17-12	24
Պորտօ	14	6	4	4	16-17	22
Լը Մանս	14	6	2	6	18-21	20
Սթրասպուրկ	14	5	5	4	15-10	22

ՄԱՐԱԶԴ



Սրտի դառն կակիծով կը գուժենք մահ՛ը՝
ԶԱԻՆ ԿԻՕՔՃԵԱՆԻ
(Ծնեալ Մուսա Տաղ 1925 ին)

որ երկարատեւ հիւանդութենէ ետք Փասատինայի Huntington հիւանդանոցի մէջ Նոյեմբեր 27ին կնքեց իր մահկանացուն:

Սգաւորներն են,
Այրի Տիկինը՝ Էլիզապէթ Սարաֆեան-Կէօքճեան
Տէր եւ Տիկ. Իվան եւ գոհար Քէսեան եւ իրենց որդին՝ Արմէն
Տէր եւ Տիկ. Ռոտրիկ եւ Սեւան Քիւրքճեան եւ որդին Ակսել
Տէր եւ Տիկ. Մանֆրետ եւ Անի Կոթվալտ եւ իրենց որդիները՝
Քրիսթիան եւ Սեպաստիան

Յուդարկաւորութեան եւ յաւելեալ տեղեկութիւններու համար կը խնդրուի հեռաձայնել (213) 590-3003

Հայ Թելեժամը Կը Վերադառնայ 18ը Ալիքի Վրայ Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ այլ Օրուան 24 ժամերը

Շաբաթը 7 օր անվճար

Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել
Հայկական Թելեժամ (818) 982-2400

The Armenian Teletime Is Back On Channel 18
Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day
7 Days Per Week, Free
No Subscription Fee - Plus 40 Additional Channels
For info call The Armenian Channel (818) 982-2400

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:00
Կլէմտայի 26-րդ կայանից

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՇՆՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՍԱՆԱԿԱՑՈՅՑԸ

CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՄԵՅԼ, ՊԸՐՊԵՆԸ, ԼԱ ԶՐԵՍԵՆԹԱ)
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

ՄԱՍԻՍ

ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Ս.Դ.Շ.Կ. 120-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

Շաբունակուած էջ 7-էն

ազգային կազմակերպութիւններու վարչութիւններուն:

Գնահատանքի այս յուշատախտակներ յանձնուեցան Տիարք Հայկ Միսաքեանին, Գրիգոր Նգրուրեանին, Սեպուհ Պոյաճեանին, Օհաննէս Տէգիրմէնճեանին եւ Արմէն Քիւրքճեանին:

Յայտագիրի վերջին մասով ազգային ու հայրենասիրական երգերով ելոյթ ունեցաւ Լոս Անճելըսէն հրաւիրուած երգիչ Հրաչ Պողարեան, որուն օրկի վրայ կ'ընկերանար Իսահակ Տալուգեան:

Յաջորդ օրը, Կիրակի Նոյեմբեր 18-ին տեղի ունեցաւ Կուսակցութեան նոր կեդրոնատեղիի բացման պաշտօնական արարողութիւնը:

Ընկ. Սեդրակ Աճէմեան ժապաւէնը կտրելէ ետք ակումբի առջեւ համաձայնուած ժողովուրդը մուտք գործեց սրահ, ուր օրհնութեան աղօթք կատարեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Հ. Եղիա Մ. Վրդ. Գիրէջեան: Ապա շնորհաւորական ելոյթներ ունեցան Ընկ. Աճէմեան եւ ՀՅԴ «Սողոմոն Թէ՛՛՛՛՛րեան» կոմիտէի հերթապահ Յակոբ Ճանպազեան:

Վերջաւորութեան շնորհակալական խօսք ըսաւ Ընկ. Պետրոս Մուշեան, ապա տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Օրուայ հանդիսութեան փակման խօսքը եւ աղօթքը կատարեց Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Տ. Զարեհ Ա. Քհնյ. Զարգարեան:

ԱՄԵՆԱՅՆ ԸԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՕԾԵՅ ՋԵՐՄՈՒԿԻ ՍԲ. ԳԱՅԱՆԷ ԵԿԵՂԵՑԻՆ

Շաբունակուած էջ 8-էն

որովհետեւ այն հաստատուած է եղել մեր գործը հաւատքի վրայ, մեր հայրերի սրբազան ժառանգութեան վրայ, նրանց նահատակուած սուրբ արեամբ են շողախուած եղել մեր հոգու տաճարի ամուր հիմերը: Հոգին է կենդանարար, եւ մենք պիտի շարունակենք մեր կենդանարար հոգին գործը պահել աղօթքով, աստուածսիրութեամբ, բարի գործերով, որոնք պիտի բխեն առ Հայրենիք սիրուց եւ առ Աստուած սիրուց»:

Նորին Սբութիւնը նաեւ իր բարձր գնահատանքը բերեց եկեղեցու բարերարին ու նրա ընտանիքին, մարդի եւ քաղաքի իշխանութիւններին եւ ապա վստահութիւն յայտնեց, որ բարեպաշտ հայորդի-

ներն իրենց աղօթքով ու նախանձախնդրութեամբ շէն ու պայծառ պիտի պահեն նորակառուց եկեղեցին:

Յաւարտ իր խօսքի վեհափառ Հայրապետը Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» պատուոյ բարձր շքանշան յանձնեց տիար Աշոտ Արսէնեանին:

Նորին Սրբութեանն ուղեկցում էին Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Թորգոմ վրդ. Տօնիկեանը, Մայր Աթոռի փոխղեկանապետ Տ. Մեսրոպ արեղայ Պարսամեանը, Նորին Սրբութեան գաւազանակիր Տ. Յովնան արեղայ Յակոբեանը եւ Տեղեկատուական համակարգի տնօրէն Տ. Վահրամ քհն. Մելիքեանը:

ԲԱՑՈՒԱԾ Է

Հիպնոսաբուժութեան կեդրոն
ղեկավարութեամբ՝
Փորձառու բժիշկ Արթին Սադրեանի

Փասատինայի մէջ
Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն
մինչեւ կ.ե. ժամը 3:00
Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E
Pasadena CA 91104
Հեռախօս (818) 434-8118
միայն ժամադրութեամբ

«Միտք մարմնի վրայ»
թուլացման (relaxation) միջոցաւ կը
դարմանուին

- Մարմնային ֆրոնիկ հիւանդութիւններ, արեան գերմնշում, շաքարախտ, ազմա, եւ այլն:
- Մոլութիւններ - սիկարէթ, ալոլ, քմրադէղեր, եւ այլն:
- Հոգեկան տագնապներ - անձկութիւն, ընկճուածութիւն, վախ, անհանգստութիւն, եւ այլն:
- Մանուկներու յատուկ վիճակներ - ADD, գիշերափն մէզ, եղունգի կրծում, եւ այլն:
- Ուսումնական եւ սրտքային բարելաւում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

*Բեղմնաւոր Անցեալ
Proud Past*



*Լուսաշող Ապագայ
Exciting Future*

AGBU HYE GEEN

Presents

**MIREILLE KALFAYAN'S BOOK
"AS A WOMAN SAW IT"**

Collection of Articles

Presenters:

PROF. OSHEEN KESHISHIAN and MS. CECILE KESHISHIAN

SATURDAY, DECEMBER 15, 2007 - 11:00 AM

AGBU ALEX MANOOGIAN CENTER

2495 East Mountain Street, Pasadena, CA 91104

RSVP: agbuhyegeen@gmail.com or by calling (626) 794-7942

AGBU PASADENA CHAPTER

Presents

**New
Year's
eve gala**

*Monday, Dec. 31, 2007
Pasadena Center
8:00pm*

*Dinner catered by "La Fogata"
DJ entertainment by "Heartbeat"*

*Please RSVP
(626) 794-7942*

AGBU Center Pasadena • 2495 E. Mountain St. Pasadena

<p>ADULTS CELEBRATION GYMNASIUM SEATING DONATION \$100</p>	<p>TEEN'S CELEBRATION IN "BOYAJIAN HALL" DONATION \$65</p>	<p>KIDS 12 & UNDER CELEBRATION IN "BIG TENT" DONATION \$30</p>
---	---	---